

56p - 26p hyzant
Two piers 6p

891.99
45

891.99
S-45

ՀՈՎՍԵՓ ՏԵՐ ՂԵՎՈՆԴՅԱՆ

(ԴԵ-ԴԵ)

Խ Մ Բ Ա Պ Ե Տ Ը

ՏՐԱԳԻ-ԿՈՍԵԴԻԱ
ՅԵՐԵՔ ԱՐԱՐՎԱԾՈՎ

ԹԻՖԼԻՍ
1928



89199

-6 NOV 2011

5-45

ՀՈՎՍԵՓ ՏԵՐ ՂԵՎՈՆԴՅԱՆ

(Te-Γe)

891-54-2

ЦЕНТР. ГОСУДАРСТВЕН. БИБЛИОТЕКА СССР.
Инв. № 212-3

Խ Մ Բ Ա Պ Ե Տ Ը

ՏՐԱԳԻ-ԿՈՍԵԴԻԱ
ՅԵՐԵԲ ԱՐԱՐՎԱԾՈՎ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Ե
1905 թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏՈ

ԹԻՖԼԻՍ
1928

ՏՊԱՐԱՆ ՊՈԼԻԳՐԱՖԻԿԱԿԱՆ
ԱԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻԻ ՓՈՂ. № 3.
ԳԼԱՎԼԻՏ 2314. ՏԻՐԱԺ 500.



7 858 63

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Զ Ի Ք

1. Բարբառայան, պճնագգեստ վաճառական և դաշնակցական խմբապետ:
2. Կասյա, նրա կինը:
3. Մարո - սաւիկ, Բարբառայանի մայրը:
4. Մանյակ, Բարբառայանի դուստրը:
5. Թափանյան, վարժապետ, կրոնոսույց, տիրացու և դաշնակցական գործիչ:
6. Սարգիս, ծառայող:
7. Սաքենիկ, նրա կինը:
8. Դարչո, վորմնագիր:
9. Վանիկյա, հյուան:
10. Տեր - Ղազար, մատնիչ և պրովակատոր:
11. Պրիսավ:
12. Գուսպերչուկ, պոլիցիական թաղապետ:
13. Խուզարկուներ:
14. Կարո, մաքսանենգ:
15. 1) զինվոր:
16. 11) զինվոր:
17. Դիմակավոր:

Բեմը բոլոր գործողությունների համար նույնն է և ներկայաց-
նում է Բարբառյանի տան նեղ ու խեղդված բակը: Դիմացը
յերկհարկանի տուն: Առաջին հարկում բնակվում է Թափանյանը,
յերկրորդում՝ Բարբառյանը: Յերկրորդ հարկը չի յերևում: Նրա
գոյությունը իմացվում է այնտեղից իջնող փայտե յերկար սան-
դուխքից: Այդ սանդուխքն սկսվում է բեմի ձախ կողմի յերկրորդ
պլանից, ծովում է դեպի աջ և անհետանում աջ կողմը գտնվող
Սարգսի նկուղի վրայով: Սանդուխքից դեպի աջ գտնվում է ար-
տաքնոցը, իսկ ձախ՝ առաջին պլանում դրված է աղբի արկղը:
Սարգսի նկուղի կողքին — պարտեզ՝ 2 — 3 կիսամերկ ծառերով:
Սանդուխքի մոտ՝ ջրմուղի խողովակ:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ր Ա Ր Վ Ա Մ

Բարբառյանը մտնում է բակը, դիմում է դեպի Սարգսի բնակա-
րանը և ձեռնափայտով ծեծում դուռը: Դռների մեջ յերևում է
Սաթենիկը:

Բարբ. — Մարդդ յեկամ:

Սար. — Ձե:

Բարբ. — Ասեւ եմ, վոր այսոր բաց թողնեն բանտից:

Սար. — Ինչո՞ւ:

Բարբ. — Հարկավոր է:

Սար. — Ինչի՞դ է հարկավոր. գուցե ելի մի թակարդ ես սար-
քել... Սերդ վերջացավ, հմ. նպատակիդ չհասար ու մարդուս
ազատում ես:

Բարբ. — Հիմար բաներ մի ասի...

Սար. — Յես հիմար բաներ չեմ ասում. կարծում եմ, վոր
քեզ բավական լավ ճանաչեցինք:

Բարբ. — Սխալվում ես, շուտով ապացույցը կիմանաս:

Սար. — Ի՞նչ ես շարունակ վերե նայում... Վախենում ես, հմ:

Բարբ. — Վախենում եմ:

Սար. — Իհարկե վախենում եք, պարոն խմբապետ:

Բարբ. — Խեղբդ գլուխդ հավաքիր. յես խմբապետությունը
քեզանից չեմ ստացել:

Սար. — Գուցե ինձ ել կալանավորել կտաս՝ հայոց ազգը
փրկելու համար:

Բարբ. — Վհչ, դաշնակցությունը հասկանում է կանանց
«դադրը»:

Սար. — Իսկ յեթե կանայք ինձ նման անհնազանդ են:

Բարբ. — Մենք աշխատում ենք նրանց հնազանդեցնել:

Սար. — Մանավանդ դժւք:

Բարբ. — Ինչո՞ւ յես այդպես բարկացած այսոր:

Սար. — Յես բարկացած. վնչ... Յես ուղղակի զգվում եմ՝
ձեզ պես մարդկանց տեսնելիս:

Բարբ. — Շնորհակալություն... Ուրեմն յես սխալվեցի. յես
հույս ունեյի քո գրկում մի փոքր հանգստանալ՝ բայց բանից
դուրս յեկավ, վոր բոլոր կանայքդ ել միևնույն խմորից եք թխված:

Սար. — Յերեկ յերեկոյան դու բոլորովին ուրիշ բան եյիր
ասում...

Բարբ. — Վորովհետեւ դու ել եյիր յերեկ յերեկոյան յերկնքից
ցած իջած հրեշտակի պես բարի... բայց ափսոս վոր...

Սար. — Բայց ափսոս, վոր չհիմարացաւ և չսեցի քո խոսքը...
հա, այդ ես ուզում ասել:

Բարբ. — Բավական ե... Թող, ի սեր ասածո, խոսակցության
այդ ձևը:

Սար. — Շատ բարի, ցտեսություն: (Տուն ե մտնում, Բար-
բառյանը յերկար ժամանակ անտարբեր կանգնելուց հետո, մոտե-
նում ե սանդուղքին, վոր վերեւ բարձրանա: Դարչոն ու Վանիչկան
յերևում են դռների մեջ):

Դարչո. — Բարիդուն, պարուն:

Բարբ. — Հը՛, ի՞նչ խաբար:

Վանիչ. — Մասալեն պակսում ա:

Դարչո. — Յեղի պատը վեր քաշեցինք, հմի կես ագուռ պակ-
սացնում ենք ..

Բարբ. — Տեսնիկը յեկավ:

Դարչո. — Ձե, ես շաբաթ ըսկի չի յերևացել:

Բարբ. — Գյուլլախորով պետք ե անեմ այն շուն-շան վորդուն,
վոր խելքը գլուխը գա:

Վանիչ. — Գյուլլախորով վոր անես, են խո խելքն իստակ
կկորցնի:

Բարբ. — Յես կատակների ժամանակ չունեմ. բանի յեք յեկել,
բան ասացեք:

Դարչո. — Ասացինք ելի, մասալա յա պետք. տախտակեղեն:
Գաջն ու ագուռն ել վերջանալու վրա յեն:

Վանիչ. — Շաբաթ որն ասում եյիր, թե ըսոր գքաս, շինու-
թյունը կտեսնես:

Բարբ. — Յես վոր ձեզ պես մենակ կալատող կամ դուրգյար
լինեյի, սաղ որբերով ձեր կողքին կնստեյի. հազար ու մի բան
ունեմ կատարելու, հազար ու մի կուսակցական գործ կարգի բե-
րելու: Բա եզ հանաք բան գիտե՞ք...

Դարչո. — Հալբաթ վոր, պարոն Գասպար, քո գործը ուրիշ
ա. մենք մշակ խալիս ենք, համ ել ես տունը մեզ համար խո չենք
շինում. քոնն ա, ասոված քեզ տա, մենք ուզում ենք, վոր ամեն
բան քո սրտովը ըլի...

Բարբ. — Ճիշտ ե, ճիշտ... եզուց անպատճառ կգամ, այսոր
շատ բան ունեմ: Ազգային գործով պիտի մի բանի տեղ գնամ,
վաղը կ'գամ:

Դարչո. — Լավ, շատ, լավ, համեցեք. եզուց գիփ քու աչքով
կտեսնես:

Վանիչ. — Ըսոր մեզ մի քիչ փող կտամ, թե չե, քաղցած
կոտորվում ենք:

Դարչո. — Դու ըսոր մեզ փող պիտի տայիր:

Բարբ. — Դիտեմ՝ խոստացա, յեթե ունենամ, բայց դժբախ-
տաբար չեմ կարող. մի քանի անհետաձգելի ծախսեր ունեյի. քիչ
մնաց մուրհակներս պրոտեստ ղրկեն. եզուց հույս ունեմ, վոր...

Դարչո. — Ե՛, անպեր, թե դու ծախսեր ունես, եզ քու բանն
ա, մենք մեր հացի փողն ենք ուզում...

Վանիչ. — Բա վոր հմի տուն գնանք, մեր ողլուշադն ու յերե-
խերքը հաց ուղեն, ի՞նչ շուղար տանք:

Բարբ. — Դուք հայ չե՞ք:

Վանիչ. — Իժճում...

Դարչո. — Վոր հայ ենք, կարմնք, վոր քաղցած մնանք: Հա-
վուց ազգին աստոծ ջեր եզ թավուր շնորք չի տվել:

Բարբ. — Ազգը պահանջում ե ձեզանից, վոր այդ շնորհքն ել
բանեցնեք:

Վանիչ. — Ձեմ գիդա, թե ազգը եստի ի՞նչ գործ ունի:

Բարբ. — Ինչպես թե գործ չունի, բա իզուր տեղն են ինձ
խմբապետ նշանակել:

Վանիչ. — Խմբապետ ես, անպեր, գուրենատուր հո չե՞ս, վոր
մեզ քաղցած ես թողնում:

Բարբ. — Ինչպես ես համարձակվում, տո շուն-շան վորդի,
վոր ինձ ուս չինովելի հետ ես համեմատում. գյուլլախորով
անել կտամ հա:

Դարչո. — Մոլլափ, մոլլափ, եզ ի՞նչ շատ խոսքեր ես գյուլ-
լախորով անում. դու մեզ են ասա՝ խոստացա՞ր, թե չե, վոր եսոր
մեզ փող հասցնես:

Բարբ. — Հա, խոստացա:

Դարչո. — Ո՛ւրա. բեր ելի:

Բարբ. — Խլացել էս. ասում եմ, վոր այսօր աղգային գործերով եյի զբաղված, չկարողացա փող ձարել:

Վանիչ. — Բաս դու խլացել էս, չես իմանում, վոր քաղցած ենք, յերկու շաբաթ ա մեզ կոպեկ չես տվել:

Դարչո. — Թե աղգի առաջ ել քո խոստացածը ետենց ես կատարում...

Վանիչ. — Մեր պայծառ հայ քրիստոնյա աղգը շատ ել հեռու չի գնա:

Բարբ. — Ուրեմն դու հանդգնում ես դաշնակցության կուսակցական ծրագրի մասին կասկածներ հայտնել:

Դարչո. — Լավ, թե քու դեյդի հոգին կսիրես, դաթար տու եղ դաշնակցությունով տրաքախութենին... Դուսն մեզ էն ասա...

Վանիչ. — Ի՞նչ ես դաշնակցությունով վախեցնում, խելքդ ուր ա գնացել. մենք յերկու շաբաթ եստի քաղցած - ծարավ կենանք, թե դու խմբապետ ես:

Դարչո. — Այ, լավ իմացի, թե վոր եզուց մեզ փող չես հասցրե, մենք շաբաշ կանենք, ու ես վախտը գնա, վորդի քունն ասես, մերն ել երդի ասա:

Բարբ. — Արեք, շաբաշ արեք... ինձ ձեր աշխատանքը հարկավոր չի... յես ձեր տեղը թուրքեր կբերեմ:

Դարչո. — Մթոմ վախեցրիր, ելի. վոր թուրք բերես, թուրքը մարդ չի՞, նա հաց չի՞ ուտում, յանի թե նա տունդ մուքթա կշինի:

Բարբ. — Տեսնում եմ, դուք վրացի սոցիալիստներից եք վարակվել:

Վանիչ. — Գնա յե՛, Հագո, բան եք սովորել. վրացի, թուրք. ուսու... տո՛, երեսկ մեզ մի խելք սովրեցնող ըլի, մեզ փրկի ես սև որից. վրացի ու թուրք չե, թեկուզ մլթոնի ըլի:

Բարբ. — Հապա բազմաշարժար հայ աղգը, կաթողիկոսական գահը, նահատակ Տաճկահայաստանը... դուք խիղճ ու զգացմունք չունեք:

Դարչո. — Անխիղճը դու յես, վոր եսա սաղ երկու շաբաթա մեզ խափում ես ու կոպեկ չես տալի. քու գրաբար ալալիոս-գալալիոսով մեր գլուխը չես կարա յեղի: (Սաթենիկը դուրս ե գալիս՝ տան դռնը փակելով):

Սաթեն. — (Լսելով վերջին խոսքերը): Խաբելուց ել հեշտ բան... (գնում է):

Բարբ. — Ինչպե՞ս թե... Սպասեցեք, տիկին Սաթենիկ...

Վանիչ. — Ղոչաղ կնիկ, տեղը բռնեց հա՛...

Դարչո. — Մի վախենա, կուժն ամեն ուր ջուր չի բերի:

Վանիչ. — Ընչի, թե վոր կուժը խմբապետի կուժն ա...

Կասյա. — (Վերևից): Գնապար, Գնապար, եկել էս. արի յե... թեյը սառեց...

Բարբ. — Գալիս եմ, գալիս:

Կասյա. — (Սանդուխտների վրա): Ես ուր գնդապետի յերեխին կնքում են. կնիկը պատահեց ինձ փողոցում ու կնունքի հրավիրեց, գնում եմ՝ մի պաղարկա առնեմ, բայց չգիտեմ ի՞նչ առնեմ...

Դարչո. — Այ, անպեր, տեսնում ես... դու հայ աղգի խաթրու կնունք ես գնում... պաղարկեք ես առնում, մենք ենք, վոր...

Բարբ. — Լավ, լավ, վաղը կստանաք... անպատճառ կաշխատեմ... տեսնեք...

Դարչո. — Բարի գշեր... Մասալի թաղարիքն ել պետք ա տեսնես...

Վանիչ. — Չմոռանաս, թե աստոծդ կսիրես... (գնում են):

Կասյա. — Չգիտեմ, թե ի՞նչ գնեմ. գլուխս ցավեց մտածելուց:

Բարբ. — Ափսոս, վոր չկոտրվեց այդպիսի նահլաթ գլուխը:

Կասյա. — (Անպասելի վերափոխության հուզված): Գժվել ես, ի՞նչ ե, ելի սկսեցիր քո վայրենությունները. յեթե իմ գլուխը նահլաթ գլուխ ե, ել ինչո՞ւ եյիր յերկու ամիս առաջ մարդ մարդու յետևից ուղարկում. թե վերադարձիր, հա՛ վերադարձիր...

Բարբ. — Քո պատճառով չեք, վոր կանչում եյի. յերեխաներիս, յերեխաներիս համար եյի կանչում. յես չեմ կարող թույլ տալ, վոր իմ յերեխաները քու ընտանիքում մեծանան...

Կասյա. — Չի՞ կարելի արդյոք իմանալ, թե ձեր ընտանիքն ինչով է լավ...

Բարբ. — Նախ, վոր իմ ընտանիքում դավաճան չկա, և յերկրորդ, վոր բոլորն ել առհասարակ ...ը...ը... աղնիվ մարդիկ են:

Կասյա. — Յերեկ աղնիվադույնն ել դու յես:

Բարբ. — Ի՞նչ ե, չես հավանում:

Մարո. — (Վոր վերևից լսում եր ամուսինների վեճը): Գնապար ջան, Կատյային բեղամաղ մի անի (ցած իջնելով): Ասումա Խաթակն ել ա ըլելու կնունքին... յես սովորեցրի, վոր մի լավ ընծա առնի երեխի հմա. եպուց ելոր աղջկանդ մենենիկնա, նրանք մի լավ բան կբերեն... թե կարող ես, Խաթակին ել կանչի, շատ ոգտակար մարդ ա. են Սաքոն վոր գնդապետ դառավ, Խաթակի շնորքովը չե՞ր:

Բարբ. — Ո՞վ տսեց, թե Խաթակը այնտեղ ե լինելու:

Մարո. — Սիրուշն եր ասել Կատարինին:

Բարբ. — (Կատային): Հապա չեյլ՞ր կարող մի փոքր վաղ ասել:

Կասյա. — Ի՞նչ ասելի. գայլի նման այնպես հարձակվեցիր վրաս, վոր...

Բարբ. — Բաս ի՞նչ անեմ, մի կռակի խորամանկություն չկա քո մեջ. այն մարդիկ կանգնած հետո կուվում են, հացի փող են ուզում, իսկ դու նվեր գնելու մասին ես խոսում, ախար լսած բան է:

Կասյա. — Ինչո՞ւ յես են մարդկանց իզուր տեղը չարչարում: Փող խում ունես, վճարիր ելի:

Բարբ. — Վոր ասում եմ նահլաթ ես. ախր են փողը հազար տեր ունի...

Կասյա. — Կարող ես չչարունակել, եղ խոսքերը մենք շատ ենք լսել... «ուրիշի փողն ե», «կուսակցության փողն ե», «բանկի փողն ե», իսկ վերջը դուրս ե գալիս, վոր Գասպար Բարբառյանի փողն ե...

Բարբ. — Հապա դու կարծում ես, թե առետուրը հեշտ բան է:

Կասյա. — Գիտեմ, վոր ավելի դժվար ե, քան թե խաբեբայությունը:

Բարբ. — Սովորել ես ելի, սոցիալիստ յեղբորիցդ մեծ - մեծ խոսելը:

Կարո. — (Մտնում ե յերկու պայուսակներով բռնավորված): Բարի իրիզուն:

Բարբ. — Ասածու բարին. այսպես որը ցերեկով:

Կարո. — Ցերեկը գիշերվանից լավ ե:

Բարբ. — Յէ՞րը յեկար:

Կարո. — Այսոր ճաշին:

Բարբ. — (Հանում ե գրպանից մի ահագին կաշիլոյկ — Կատային): Առ, գնա մի լավ նվեր գնիր, քաղցրեղեն ել չմոռանաս. (Սկսում ե համարել արծաթյա դրամները) քսան ուրբի բավական է:

Կասյա. — Քսան ուրբի շատ քիչ ե... մեկ ել արծաթ մի տա... ի՞նչ անեմ ես արծաթ փողը:

Բարբ. — «Նահլաթը» մոռացմը (ակնարկում Կարոյի վրա): Ախր ուրիշ փող չունեմ, բոլոր ունեցածս այս ե:

Կարո. — Ինձ համար ել փող պատրաստիր... վաղը պետք ե մեկնեմ: Բաթումը ապրանքով լիքն ե:

Բարբ. — Գնե՛րն եժան է՛ն:

Կարո. — Խիստ թանկ... Սոխի սերմը միայն...

Բարբ. — (Կատային): Առ, գնա բանիդ (փողը տալիս ե նրան): Դու յեղ մայրիկ, մի լավ ձվածեղ պատրաստիր: (Կանայք գնում են):

Կարո. — Թափանջանը տանը չէ:

Բարբ. — Ձե, այսոր կոմիտեյում հերթապահ ե մինչև ժամի տասներկուսը:

Կարո. — Իսկ Սարգիսը:

Բարբ. — Սարգիսն ել կոմիտեյում բանտարկված ե:

Կարո. — Ինչո՞ւ:

Բարբ. — Սոցիալիստների հետ հարաբերությունների մեջ ե յեղի. ասում են, վոր առաջին պետական դումայի ընտրություններին դեմոկրատներին ե ձայն տվել, այն ինչ նրան պատվիրած եր հայ կաղետներին ձայն տալ:

Կարո. — (Նստում ե պայուսակներից մեկի վրա, հառաչելով): Խեղճ հայ ազգ, եսքան ել դժբախտությո՞ւն, հիմի ո՞վ ասես սոցիալ ե դառնում:

Բարբ. — Յեկ, քանի վոչ վոք չկա, այդ իրերը պահենք:

Կարո. — Վճրտեղ պահենք... այստեղ:

Բարբ. — Այստեղ. արկղի տակ:

Կարո. — (Բաց ե անում արկղը): Պայուսակներով:

Բարբ. — Սպասիր. (գնում ե դուռը փակում): Վերցրու այս թի՛ն ե աղբը դուրս ածա:

Կարո. — (Մտնում ե արկղը ու աղբը դուրս թափում):

Բարբ. — Այժմ այդ ներքեի տախտակը բարձրացրու... աղբը մի կողմը հավաքիր. այդպես... բարձրացրո՞ւ... կողքից... կողքից...

Կարո. — Յեղանվ:

Բարբ. — Առ (տալիս ե մի պայուսակ): Ի՞նչ կա մեջը:

Կարո. — Քսանհինգ հատ մաուզեր:

Բարբ. — Դարսիր... շո՛ւտ:

Կարո. — (Համարելով): Մեկ, յերկու, հինգ. այս ել 10... 10 հատ կապած:

Բարբ. — Դի՛ր. լավ փաթաթիր, վոր չժանգոտվեն:

Կարո. — Վրեն յեղ ե քսած:

Բարբ. — (Տալիս ե մյուս պայուսակը): Իսկ այստե՞ղ...

Կարո. — Ցերեսուն հատ... տես, տղա-տաա կապած:

Բարբ. — Սպասիր, մեկն ինձ տուր տեսնեմ... (փորձում ե):

Կարո. — Լավ ապրանք ե. յես փորձել եմ (հանկարծ Բարբառյանի ձեռքի ատրճառակը կլակվում է):

Բարբ. — Շունշանվորդի, տունս քանդեցիր, շոտ, շոտ, ծածկիր, ծածկիր տախտակը:

Կարո. — (Հանգստացնելով): Մի վախենա, ամեն բան պատահում է:

Բարբ. — (Շտապով վերցնում է պայուսակները և պահում Սարգսի տուն տանող սանդուղքների տակ): Ծածկեցիր... ալժամ աղբը ածա վրան և ցած իջիր... եղպես... դուռը ծածկիր (գնում է մի ավել բերում և աշխատում է աղբի հետքը կորցնել):

Կարո. — Ինչո՞ւ եղպես վախեցար:

Բարբ. — Ասում ես ինքդ փորձել ես:

Կարո. — Այո:

Բարբ. — Հապա ինչո՞ւ փամփուշտը մեջն եր:

Կարո. — Մաքսանենգներին փամփուշտը հարկավորվում է սահմանն անցնելիս... յերեկ մոռացել եմ մեջը:

Բարբ. — Կարծեմ լավ պրծանք, վոչ վոք չլսեց:

Կարո. — Ո՞վ պետք է լսեր, ամենքն ել իրանց գործին են:

Մարո. — Բան, լավեց:

Բարբ. — Սու... ուս:

Մարո. — (Հասկանալով): Եկեք, ձվաձեղը պատրաստ ա:

Բարբ. — Գալիս ենք: (Վերարկուն վոր առաջ հանել եր, վերցնում է. բաց է անում փողոցի դուռը): Դե, գնանք հոգնած կլինես...

Կարո. — Յեվ հոգնած եմ, և՛ քաղցած:

Մարո. — Համեցեք, համեցեք: (Մտնում է Թափանյանը վրդովված):

Թափան. — Կորանք... Կորավ դաշնակցական կուսակցությանը, կոմիտեն շրջապատված է: Սարգսի բնակարանը խուզարկում են:

Բարբ. — Ի՞նչ:

Կարո. — Յերեկ մատնություն է կատարված:

Թափան. — Ձեռքեր են փնտռում:

Բարբ. — Ձեռքեր:

Կարո. — Մատնված ենք, անպատճառ մատնված:

Բարբ. — Սարգսի այնտեղ է:

Թափան. — Կես ժամ առաջ խաժակի կարգադրությունը սպառեցինք:

Բարբ. — Զլինի՞ թե մեր տունն էլ խուզարկեն:

Թափան. — Շատ հավանական է, մի քանի թուուցիկ ունեմ, ուզում եմ վոչնչացնել:

Կարո. — Շտապիր, ել ինչո՞ւ յես սպասում:

Բարբ. — Հապա յես ի՞նչ անեմ. տունս կքանդվի, յեթե գան խուզարկեն. (Թափանյանը մտնում է յուր բնակարանը՝ սանդուղքի աակ և լույսը վառում. պատահանից յերևում է, թե ինչպես դես ու դեն ընկած, թղթեր է հավաքում):

Կարո. — Զուր տեղը մի վրդովվիր. զենքերը շատ լավ են պահված. նստիր հանգիստ սպասիր:

Բարբ. — Վոչ, հարկավոր է անպայման տեղափոխել զենքերը:

Կարո. — Ո՞ւր պետք է տեղափոխես:

Բարբ. — Ձեռ համաձայնվի՞ հիսուն տոկոս զեղջով բերած ապրանքդ հետ վերցնել:

Կարո. — Պարոն խմբապետ, դու սխալվում ես, յեթե կարծում ես, վոր յես, ոգտվելով կուսակցության անել դրությունից, կարող եմ նրան շահագործել... յես ինքս ել կուսակցական եմ և ողես ցարի արյունը նույնպես հաճույքով կխմեմ, վորպես և թուրք սուլթանի արյունը:

Բարբ. — Հապա ի՞նչ անենք:

Կարո. — Պետք է հանգիստ նստես կամ թե առաջ մտածած լինեիր այդ մասին:

Բարբ. — Ո՞ւմ մտքով կանցներ, ո՞վ կմտածեր, թե ես որին կհասնենք:

Մարո. — Զվաճեղը սառեց, Գասպար ջան:

Բարբ. — Սպասիր, դու յեկ դահլա մի տանիր քու ձվաձեղով:

Կարո. — Ինչեք, պետք է սպասեք... հարկավոր չե վրդովվել... կարող ե պատահել, վոր չգան. այնպես վոր գուցե և իզուր եք աղմուկ բարձրացնում:

Բարբ. — Իսկ յեթե գա՞ն:

Կարո. — Մեր գործի մարդիկ պետք է ամեն բանի պատրաստ լինեն:

Բարբ. — Հեշտ է ասել՝ պատրաստ լինել. հապա ընտանիք, տո՞ւն, տե՞ղ:

Կարո. — Կուսակցական մարդուն ի՞նչ տուն, ի՞նչ տեղ...

Բարբ. — Ինչպե՞ս թե:

Կարո. — Իհարկե, այն ժամանակ պետք է նստես խանութում և քո առևտրով պարապես միայն:

Բարբ. — Կարծես թե դիտմամբ հենց մեզ եյին սպասում:

Կարո. — Վորտեղ ալյուր լինի, այնտեղ միշտ մկներ կհա-
վաքվեն:

Բարբ. — Քանդվեց տունս, քանդվեց:

Կարո. — Խմբապետ հս... հուսահատվելն ամոթ ե քեզ համար,
լավ որինակ չի լինի մյուսների համար:

Բարբ. — Յերբ վոր տունս քանդվի, ել ի՞նչ որինակ:

Սարգիս. — (Մտնում ե): Բարե... լսե՛լ եք... ամբողջ թաղը
չըջապատել են...

Բարբ. — Ինչպե՞ս թե...

Սարգիս. — Այո, Սարգսարի տան հատակի բոլոր տախտակ-
ները հանել են... վառարանը քանդել. զենք են փնտրում: (Կարո-
յին): Չենք ես բերել, հա՛:

Կարո. — Հետո՞. բան են գտել Սարգսարի մոտ:

Սարգիս. — Ասում են՝ վոչինչ չի յեղել, իբր թե յերեկ տեղա-
փոխել ե ամեն բան:

Բարբ. — Ինչպե՞ս թե տեղափոխել ե. ո՞վ նրան իրավունք
տվավ:

Սարգիս. — Յես համենայն դեպս ձեռն չգիրտեմ, մի գուցե
սխալվում եմ...

Բարբ. — Յեթե տեղափոխում եր, հապա ինչո՞ւ մեզ չասեց.
այդ դավաճանությունն ե:

Սարգիս. — Յես կրկնում եմ, վոր գուցե սուտ ե, ինձ այժմ
Բագրատն ասաց:

Կարո. — Դու ինչպե՞ս ես, Սարգիս յեղբայր:

Սարգիս. — Վոչինչ. կամաց-կամաց ապրում եմ. կոմիտեն
ատրճանակս խեց, ուզում են ինձ կուսակցական դատի յեն-
թարկել...

Կարո. — Ինչո՞ւ:

Սարգիս. — Ասում են, թե յես սոցիալիստների հետ հարա-
բերություններ եմ ունեցել պետական դումայի ընտրությունների
ժամանակ:

Կարո. — Տեղն ե, ի՞նչ գործ ունեյիր նրանց հետ:

Սարգիս. — Վո՛չ մի գործ... մեր կուսակցությունը ընտրու-
թյուններին չեր մասնակցում, իսկ յես իմ ձայնը տվի սոց. դեմո-
կրատ. կուսակցության թեկնածուներին, ընդգեմ կադետներին:

Բարբ. — Հակառակ կուսակցության հրահանգի:

Սարգիս. — Հակառակ իմ խաղեյինի և խմբապետի հրահանգի՝
ձայն չեմ տվել Վերմիշեի վոհմակին:

Բարբ. — Իհարկե, քեզ ավելի սիրելի յեր վրաց սոցիալ-դե-
մոկրատների վոհմակը:

Սարգիս. — Վրացի թե մլթոնի, այդ ինձ համար միևնույն ե.
բավական ե, վոր նրանք պաշտպանում են բանվորության շահերը:
Իսկ Վերմիշեը, Խատիսովը և ադհասարակ «Մշակ»-ի ամբողջ այդ
վոհմակը...

Բարբ. — Իսկ բազմաշարժար հայ ազգը. նահատակ Տաճկա-
հայաստանը:

Սարո. — (Վորը արդեն իջել եր): Լավ, լավ, Գնասպար ջան,
հայոց ազգի ժամանակը չի, ձվածեղը սառեց:

Բարբ. — Մայրիկ, շատ պետք ե զահլա տանե՛ս:

Սարո. — Ի՞նչ ասեցի, վոր եղպես բարկանում ես:

Բարբ. — Ախար տունս քանդվում ե ե... հրեա կզան խու-
զարկություն:

Սարո. — Խուզարկություն, վո՛ւյ հողը իմ գլխին: (Գնում ե
դեպի փողոցի դուռը):

Բարբ. — (Սարգսին): Յես իմ խմբապետական իրավունքով
պահանջում եմ, վոր դու խկույն բոլոր զենքերը տեղափոխես քո
սենյակը:

Սարգիս. — Ինչո՞ւ:

Բարբ. — Վորպեսզի...

Սարգիս. — Յերբեք, ինչո՞ւ իմ սենյակը, ուզում ես խուզար-
կության դեպքում յես տուժեմ, հա՛...

Բարբ. — Հապա յես տուժեմ...

Սարգիս. — Յեթե զենքերը տեղը մնան, խուզարկության
դեպքում բոլորս ել հավասար կտուժենք:

Բարբ. — Հավասար... յերբեք. յես իբրեւ տանտեր, ավելի
մեծ պատասխանատվության կենթարկվեմ:

Սարգիս. — Յես մեղավոր եմ, վոր դու ասն ու տեղի տեր ես:

Բարբ. — Իհարկե դու մեղավոր չես, ըստ սոցիալիստների...
դու նույնիսկ պետք ե թշնամի լինես... Չե՛ վոր նրանց համար
ազգություն, սեր, տուն, տեղ, յեղբայրություն չկա:

Կարո. — Ժամանակն անցնում ե. յեթե մտադիր չեք տեղա-
փոխելու, այն ժամանակ յես գնամ. մանավանդ վոր անցագիրս
ել կանոնավորված չե՛:

Բարբ. — Վաղը առավոտ կգաս խանութ՝ փողն ստանալու:

Կարո. — Վհչ... մեր պայմանը...

Բարբ. — Գիտեմ, գիտեմ. այս անգամ տեսնում ես, թե ինչ անել ղրության մեջ եմ... զուցե հենց իսկույն ամեն բանից ղրկվեմ:

Կարո. — Մենք որը տաս անգամ ենք լինում այդ ղրության մեջ, այնպես վոր այդ պատճառ չե արդարանալու:

Բարբ. — Յեղբայր, յես չեմ փախչում, ասում եմ՝ վաղը կստանաս...

Կարո. — Վհչ մի խոսք վաղվա մասին:

Բարբ. — Իսկ յեթե չունեմ:

Կարո. — Ուրեմն այժմ առուստուրի փոխարեն խարերայու-թյամբ ես պարապում. շատ լավ. մյուս անգամ զենք գնելու հա-մար՝ համմեցեք Բաթում, իսկ ձեր խարդախությունը չմոռանաք. ցտեսություն (ուզում ե գնալ):

Բարբ. — Սպասիր, սպասիր, ինչ շոտ ես բարկանում յեղ-բայր պատվական:

Կարո. — Յես ժամանակ չունեմ իրզուր խոսքեր վատնելու, սակարկություններ անելու. մենք զործի մարդ ենք... յեթե ճա-նապարհին բռնվեյի—յես եյի պատասխանատուն, իսկ յերբ տա-րանքը բերել, տեղ եմ հասցրել, վճարիր, այդպես ե պայմանն ու որենքը:

Բարբ. — Ա՛ռ, ստացիր 700 ուլերի, իսկ մնացածը վաղը:

Կարո. — Յես արդեն ասացի, վոր վոչ մի սակարկություն լինել չի կարող... յես քեզ համար վոսկի ապրանք եմ բերել... կարծում ես ուզողներ քիչ կային, թե...

Բարբ. — Շատ քո ասածի մարդ ես:

Կարո. — Մարդ միշտ պետք ե իր խոսքին տեր լինի, թե առնելու և թե տալու ժամանակ:

Բարբ. — Գիտես, կուսակցության համաձայնությունը դեռ չեմ ստացել:

Կարո. — Հակառակ դեպքում՝ կծախես ուրիշին կրկնակի գնով:

Բարբ. — Իսկ յեթե խուզարկեն (տալիս ե փողը):

Կարո. — Բաթումից այստեղ յես ել հազար ու մի խուզար-կությունների միջով անցա, և յեթե բռնվեյի, քեզանից պահան-ջելու իրավունք չունեյի, ցտեսություն. հարկավոր դեպքում՝ զրե-ցեք Սիլիմպուլոյի հասցեյով:

Բարբ. — Դարձյալ հույների հետ եք աշխատում:

Կարո. — Հույները ամենահմուտ մաքսանկազներն են. ցտեսու-թյուն, յեղբայր Սարգիս, ցտեսություն, Մարո-տատիկ (գնում ե):

Մարո. — Գնաս բարով (մտնում ե տ. Ղազարը):

Տ. Ղազ. — Ո՞վ եր եղ մարդը:

Մարո. — Յեկվոր եր:

Տ. Ղազ. — Հա՛, յեկվորի նման եր... Բարի յերեկո՛, Գասպար, ինչպես եք:

Բարբ. — Շատ շնորհակալ եմ:

Տ. Ղազ. — Գնամ, ասի, տեսնեմ, թե ես ի՞նչ փորձանք ա եկել մեր գլխին. խեղճ Սարգարի տունը խուզարկում են. ասում են՝ անագին քանակությամբ զենք են գտել:

Բարբ. — Հա՛, գտել են...

Տ. Ղազ. — Գտել են, բայց... քանզվեց մեր հայ ազգի տունը... դու տանն ես, Սարգիս, բաս ասում եյին, թե կոմիտեն քեզ բան-տարկել ա:

Սարգիս. — Գլուխները քարո՞յն են տալիս. թվա ասում:

Տ. Ղազ. — Յես ինչ գիտեմ, դե, խոսք եր, ականջս ընկավ:

Սարգիս. — Դու վոր քու ալիւււլով ղրաղվես, ավելի լավ կլի-նի, ի՞նչ ես քիթդ խոթում կոմիտեյի զործերի մեջ:

Տ. Ղազ. — Շատ ապրես, վորդի, այսուհետե միայն ալիււլով կղրաղվեմ, վոր իմ քիթը քեզ չբարկացնի:

Բարբ. — Բաս ի՞նչ պետք ե լինի մեր ղրությունը, տեր հայր:

Տ. Ղազ. — Ասոված վողորմած ա:

Սարգիս. — (Չաշելով Բարբառյանին մի կողմը): Լավ չեր լինի՞, վոր մեր զենքերը, քանի ուշ չե, տեղափոխեյինք յեկեղեցու բակը, դուրսը վոչ վոք չկա... խոսիր այդ ապուշի հետ:

Բարբ. — Վհչ, վհչ, յերբեք, հայոց յեկեղեցին պետք ե չեզոք մնա քաղաքականությունից:

Սարգիս. — Յեկեղեցին յերբեք չեզոք չի մնացել, չի յել մնա, հարցը միայն նրանումն ե, թե յեկեղեցին ո՞ւմ կողմն ե, հայ ազգի, թե՞ ուս կառավարության:

Բարբ. — Հայ յեկեղեցին միշտ ել ազգի կողմն ե յեղել, ամ-բողջ պատմության ընթացքում. ա. Եջմիածնի հիմնվելու որից սկսած:

Սարգիս. — Ուրեմն ոգտվեք, յեթե կարելի յե:

Բարբ. — Յերբեք. յես չեմ համաձայնվի, վոր իմ պատճառով յեկեղեցին տուժի:



Տ. Ղազ. — Շատ ապրես, Գասպար ջան, վոր եղպես հավատարիմ ես քու պապենական սուրբ յեկեղեցուն: Շատ ցավում եմ, մեղքս ինչ թաքցնեմ, վոր մինչև այժմ յես քեզ լավ չեյի ճանաչում և չգիտեյի, թե դու եղպես մեծ սյուն ես հայ յեկեղեցու համար:

Մարո. — Իմ Գասպարը շատ քրիստոսասեր ու աստվածապաշտ ա յեղեկ եմ գիտից. առանց յերեսը խաչ հանելու, առանց հայր մեր ասելու, վոչինչ չի անում:

Տ. Ղազ. — Հայտնում եմ քեզ և խոստանում, վոր աստված պետք ե քեզ փրկե ամեն տեսակ փորձություններից:

Բարբ. — Ո՛ր, տեր հայր, յեթե յես այսոր ազատվեմ ես փորձանքից, մի մատաղ կանեմ ասածուն. ու քեզ ել վոտից մինչև գլուխ կղարդարեմ...

Տ. Ղազ. — Յես քեզ հավատացնում եմ, վոր կազատվես ամեն տեսակ փորձանքից:

Սարգիս. — Ո՞վ պետք ե ազատի, դո՛ւ:

Տ. Ղազ. — Աստված, ամենակարողը, նվաստս միմիայն աղոթող ե...

Սարեն. — (Շտապով ներս ե գալիս): Դու տանն ես արդե՞ն:

Սարգիս. — Շատ վաղուց:

Բարբ. — Չե՞ վոր յես ասացի, թե գալու յես:

Սարեն. — Իսկ յես գնացել եյի գնդապետի տուն...

Մարո. — Ա՛ղչի, երեխեն արդեն ժամ եմ տարե՞լ...

Սարեն. — Վո՛չ, կարծեմ կնքահորն եմ սպասում:

Մարո. — Սաժակն երեսեղ ե՞ր:

Սարեն. — Այո՛:

Մարո. — Կատյան ինչե՞ ուշացավ:

Բարբ. — Հետո ի՞նչ ասեց գնդապետը:

Սարեն. — Շատ բան, պարոն Գասպար, շատ անսպասելի և անհավատալի բան:

Բարբ. — Որինակ:

Սարեն. — Որինակները հետո: (Բաց ե անում տան դուռը): Յեկ, յեթե վորե թուղթ ունես վոչնչացնելու, վոչնչացրու. ասում են՝ ամբողջ թաղը պետք ե խուզարկեն, չլինի՞ թե մեզ մոտ ել գան:

Սարգիս. — Գան, չգան, միևնույն ե, յես իմ թուղթիկների ժողովածուն չեմ վոչնչացնի:

Մարո. — Ի՞նչ ես ասում... եզ դատարկ թուղթիկների համար ուզում ես բռնե՞ն, դա ի՞նչ խելք ա:

Սարգիս. — Ինչպե՞ս, թե ինչ խելք ա, գիտե՞ս ինչ հազվագյուտ թուղթիկներ ունեմ. ամեն մի պատմարանի բերանի թուփը կգնա:

Մարո. — Ի՛, երմանաս դու:

Սարգիս. — Բոլոր կուսակցականների թուղթիկները... Սկսած 1902 թվականից, բոլոր լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն, թուրքերեն:

Բարբ. — (Տերտերին): Իսկ յեթե մի բան պատահելու լինի, ամբողջ ծխի կողմից մի ինդիրք կներկայացնե՞ք գուբերնատորին և կվկայե՞ք, վոր յես շատ ժամասեր և բարեպաշտ քրիստոնյա յեմ:

Տ. Ղազ. — Ապահով և հանգիստ կաց, վոչինչ ել չի պատահի. դու հավատարիմ յեղիր հայոց ազգին և յեկեղեցուն:

Բարբ. — Իսկ յեթե գան խուզարկեն:

Տ. Ղազ. — Գալիս եմ գան, յես այստեղ կսպասեմ:

Բարբ. — Տեր հայր, դուք ինձ հոգով ու մարմնով կպարտավորեցնե՞ք:

Տ. Ղազ. — Լավ, կաց, լավ... ապագան մերն ե:

Կաջա. — (Գալիս ե բռնավորված զանազան իրերով): Ո՞ւֆ, ել չեմ իմանում՝ ինչպես տուն հասա, ուղղակի հրաշք ե: Ինչդ տեղ կանգնեցիր, բոլոր իրերս խուզարկեցին. ել ծաղր, ել հրոհոց. յերկու անգամ պերոժնու արկղը ցած գցեցին:

Բարբ. — Ե՛հ, դուք ել ժամանակ եք գտել, ելի, ձեր այդ պերոժնիսերով:

Կաջա. — Աստված վկա, շատ տարրինակ մարդ ես դու, ինքդ տվիր փողը, բազար ուղարկեցիր. հիմա յեկ անբավական ես:

Բարբ. — Ա՛յ կնիկ, բաս դու չասեցի՞ր, խուզարկուները փողոցում կանգնած...:

Կաջա. — Շատ բարի, ասացի, մի՞թե յես մեղավոր եմ... յեթե իմանայի, իհարկե տանից ել չեյի դուրս գա:

Մարո. — Վո՛ւյ, նրանց աչքը քուանա, տեսե՞ք՝ ինչպես են պերոժնիսերը ճխել, փչացրել:

Մանյակ. — Տատիկ մի պերոժնի տաս:

Մարո. — Ա՛րի, ա՛րի, բալիկ ջան, արի տամ:

Կաջա. — Տաս հատ ա, վոր մի հատը նրան տաս, ել ինչ կմնա:

Մարո. — Բաս եսպես ճմռածները խոմ չեն տանի Սաթակի համար: Ա՛ռ կեր, վոր աչքդ վրեն չմնա, վճռողի:

Մանյակ. — Ես կոտորած ա, չեմ ուզում:

Մարո. — Կեր, կեր, ջանիկս, վորումդ կսաղանա:

Մանյակ. — Յես սաղն եմ ուզում:

Մարո. — Ես սաղը պետք ե տանենք քեռի Սաթակի համար, վոր նա ել հայրիկիդ գնդապետ ձեռնադրի... բան:

Մանյակ. — Ձեմ ուզում:

Մարո. — Թող վոր հայրիկդ գնդապետ դառնա ե՛, են ժամանակ քեզ համար շատ պերժմնի կառնի... առ... առ... սիրուն ջան, կեր:

Մանյակ. — Դե թող շոտ դառնա գնդապետ:

Մարո. — Բան, շուտով կդառնա:

Կասյա. — Հիմա ի՞նչ անենք, սպասենք, թե՞ գնանք:

Բարբ. — Ավելի լավ ե գնացեք վերև ե բոլորովին միք խառնվի ես գործի մեջ:

Տ. Ղազ. — Յես մարդու կամ սիրում եմ, կամ ասում, ամեն բան կախած ե նրա վերաբերմունքից -- դեպի մեր հայաստան-յայց առաքելական սուրբ յեկեղեցին. յես ինձ համար չեմ աշխատում... յես աշխատում եմ մեր պայծառ հայոց ազգի համար:

Թափ. — Վերջացրի... հազար ել տունս տակն ու վրա անեն, վոչինչ չեն գտնի:

Տ. Ղազ. — Շատ բան պահեցիր:

Թափ. — Վաչինչ չունեյի... դե թղթեր, նամակներ եյին, վերցրի այրեցի: Սարգիսը յեկավ, հա՛:

Բարբ. — Յեկավ:

Թափ. — Բախտը բանեց ե՛. յեթե մի կես ժամ ել մնար այնտեղ, այժմ կառավարության ճանկը կընկներ:

Բարբ. — Շատ ափսոս, վոր չընկավ, նրա նման մարդիկ մեզ համար փաստակար են ե խոչնդոտ. դեռ ձվից դուրս չեկած՝ բան-վորական հարցերի մասին ե խոսում:

Տ. Ղազ. — Ազգ ե յեկեղեցի չի ընդունում:

Բարբ. — 1902 թվից թուրքիկներ ե հավաքում. հետաքրքրվում ե բոլոր կուսակցությունների ծրագիրներով:

Թափ. — Ի՞նչ թվում ե, թե դու առհասարակ չափազանցնում ես. Սարգիսը շատ համեստ ե միևնույն ժամանակ քաջ ու կտրուկ յերիտասարդ ե:

Բարբ. — Այո՛, բայց դժբախտաբար նա ամեն հարցում յուր կարծիքն ունի, ե հաճախ, շատ հաճախ, սոցիալիստական կարծիք... մի տեսնեյիր, թե ինչպես եր հարձակվում Սատիսյանի, Վերմիշեի ե ուրիշների վրա... ամեն բանում յուր բանվորական հարցն ե առաջ բերում, իսկ հայ ազգին ի՞նչ ոգուտ դրանից:

Տ. Ղազ. — Հայոց ազգը մեկ ե յեղել մինչև հիմա, ե այսուհետե ել պետք ե մեկ լինի:

Թափան. — Այո՛, այդ ճշմարիտ ե, բայց դեռ ջահել ե, նրան կարելի յի ձեռքում հավաքել... հարկավոր ե նրան մի լավ հայրաբար խրատել:

Բարբ. — Վո՛չ մի խրատ նրա վրա չի ազդում, այժմ մնացել ե, վոր խանութից ել դուրս անեմ, թող գնա, ուր ուզում ե, տեղ գտնի,

Տ. Ղազ. — Տանիցդ ել դուրս արա, ինչ ես բերել նստացրել այստեղ:

Սափեն. — (Վոր այս խոսակցության վերջերում դուրս յեկած լինելով հասկանում ե, թե ինչ վտանգ ե սպառնում իր ամուսնուն): Եղպես ելի, պարոն խմբապետ, ուրեմն դուրս ես անում Սարգիսն թե խանութից, թե տանից:

Բարբ. — Սարգիսը ինքն ե իրեն դուրս անում ամեն տեղից:

Մարո. — Գնապար ջան, դոշունը շուտ տվեց մեր կողմը, ո՞վ գիտ՝ գալիս են մեզ մոտ խուզարկության:

Կասյա. — Հազար անգամ ասեցի քեզ, թող եդ գնեքի առևտուրը...

Բարբ. — Լավ լավ, ձեններդ կտրեցեք, գուցե այստեղ չեն գալի:

Տ. Ղազ. — Հանգիստ կաց, ըսկի յել մի վախենա:

Մարո. — (Դռների մոտ): Գնալիս են, գնալիս: Գնապար ջան, վո՛ւյ, հոգը գլխիս, ես ի՞նչ որը ընկանք:

Կասյա. — Հազար անգամ ասեցի...

Մանյակ. — (Ցած իջնելով): Մարո տատիկ, յես մի պերժմնի ել գողացա... Թող Սաթակը բոլորը չուտի:

Մարո. — Ի՛, հոգեմ Սաթակի գլուխը, վոր ես տնաքանդու-թյունը բերեց, մեր տանը գցեց...

Տ. Ղազ. — Գնացեք, գնացեք ամենքդ ներս, հանգիստ նրստեցեք...

Բարբ. — Եդ յերեխին ներս տար, գնացեք:

Թափան. — Յես ել գնամ:

Տ. Ղազ. — Բոլորդ: (Գնում են, բացի Բարբառյանից և Տ. Ղազարից):

Բարբ. — Պրիստավը ես կողմն և գալի:

Տ. Ղազ. — Յերեսդ խաչալինքիր, հույսդ դիր Աստծու վրա:

Բարբ. — (Յերեսը խաչալինքում է): Անուն հոր և վորդո և հոգույն սրբո... (Դուռը ծեծում են, դրսից լավում և վոստիկանի ձայնը):

Պրիս. — Գասպար Բարբառյան, Սուրբ Մուկյանի փող. № 14:

Բարբ. — (Բանալով դուռը): Համեցեք, համեցեք պարոն պրիստավ: (Մտնում են՝ պրիստավը, նրա ոգնականը և մի քանի խուզարկուներ: Դուռն մոտ կանգնում և մի զինվոր՝ հրացանը ձեռքին):

Պրիս. — Բարե՛ ձեզ, ինչպես եք, յերևի չեյիք սպասում:

Բարբ. — Ճիշտն ասած, չեյի սպասում վորովհետև, դուք գիտեք, վոր յես կառավարության հակառակ մարդ չեմ:

Պրիս. — Այո՛, այո՛, իհարկե, յես հավատացած եմ, վոր դուք ամենավստահելի անձնավորությունն եք այս թաղամասում, բայց նահանգապետի հրամանի համաձայն՝ յես ստիպված եմ խուզարկություն կատարելու ձեր տանը:

Տ. Ղազ. — Շատ ել լավ կանեք, պարոն պրիստավ. այն ժամանակ թե դուք և թե պարոն նահանգապետը կհավաստիանաք, վոր պարոն Գասպար Բարբառյանի նման հավատարիմ մարդ չկա աշխարհում:

Պրիս. — Գուսպերչակ, գործի՛ անցեք:

Դուսպերչ. — Ե՛, խուզարկուներն առնջ: (Բարբառյանը խուզարկուների հետ վերև և բարձրանում):

Բարբ. — Համեցեք, համեցեք:

Դուսպերչ. — Դու կխուզարկես այս բնակարանը (յերկու խուզարկուներ մտնում են թափանյանի բնակարանը), իսկ մենք այստեղ կխուզարկենք: (Մտնում և Սարգսի բնակարանը):

Պրիս. — (Մտերմաբար և ինտիմ): Վճրտեղ են զենքերը, իմացաք:

Տ. Ղազ. — Իմացա:

Պրիս. — Վճրտեղ են:

Տ. Ղազ. — Տեղափոխել են յերեք ուր առաջ:

Պրիս. — Չի կարող պատահել. մեր ֆիլյորներն արդեն մի շաբաթ ե՛ հետևում են նրանց:

Տ. Ղազ. — Իսկ յես քեզ ասում եմ, վոր այս Սարգիսը այն

տեսակ ավազակն է, վոր ֆիլյորներին աչքի առաջ ել կարող եր տեղափոխել զենքերը:

Պրիս. — Վորտե՞ղ են տեղափոխել:

Տ. Ղազ. — Ձկարողացա իմանալ, վոչինչ չի ասում սրիկան (ցույց է տալիս դեպի Սարգսի բնակարանը):

Պրիս. — Ուրեմն նա՞ յե տեղափոխողը:

Տ. Ղազ. — Այո՛:

Պրիս. — Ափսոս:

Տ. Ղազ. — Հարցրի տեղը, իսկ նա ինձ վիրավորեց... դու, ասում ե, քեթզ մի խառնիր ամեն բանի մեջ... գնա, ասում ե, ալելույա ասա յեկեղեցում:

Պրիս. — Պետք է անպատճառ կալանավորել նրան:

Տ. Ղազ. — Այո՛, իհարկե, կալանավորեցեք և մի լավ կողքերը դրստեցեք. ամեն ինչ կխոստովանի, յեթե մի քանի տարի բանտում փթի...

Պրիս. — Ապահով յեղեք, տե՛ր հայր, դրանից հեշտ վոչինչ չկա, ենքան քոթակ տամ իմ սեփական ձեռքերով մինչև... (նստում և արկղի վրա) խոստովանվի թե զենքերը վորտեղ են...

Տ. Ղազ. — Շատ ել լավ կանես...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Տեսարանը նույնն է. յերբ վարագույրը բացվում է, խուզարկութունը վերջանալու վրա յե. պրիստավը նստած է աղբի արկղի վրա. նրա առաջ, նույն արկղի վրա դարսված են բավական գրքեր, թուղթիկներ, նամակներ. Կարոյի յերկու պայուսակները դրված են գետնին՝ վոստիկանի առաջ. ամբողջ բակը ծածկված է զանազան թղթերով: Ինչպես յերևում է՝ յերկար և մեծ ուշադրութեամբ են կատարել խուզարկութունը: Պրիստավը, Գասպերչուկը, խուզարկուները և բոլոր բնակիչները հավաքվել են բակը: Քահանան կանգնած է կողքին, ինչ վոր ասում է նրան գաղտնի՝ նայելով Սարգսի վրա: Սարգիսը և Սաթենիկը կանգնած են իրենց բնակարանի առաջ:

Ուշ գիշեր է, բեմը լուսավորված է Բարբառյանի սանդուղքներին ամբարցրած ելեքտրական լամպոչկայով:

Պրիստավ. — Այդպես ուրեմն, խուզարկութունը պետք է վերջացած համարել. թեպետ զենք չգտանք, բայց հավատացած եմ (խփում է աղբի արկղին), վոր այստեղ զենքեր կան, այս պայուսակները, այս գրականութունը, թուղթիկները մի-մի ապացույց են, վոր այստեղ զենքեր կան: Դժբախտաբար Սարգիս Սարգսյանը գիտակից և համառ հեղափոխական է ու վոչ մի կերպ չի ուզում խոստովանել. սակայն վոչինչ, մենք խոստովանեցնելու միջոցը կգտնենք... Գասպերչուկ, հավաքեցեք այս գրքերը և կալանավորի հետ տարեք վոստիկանատուն՝ արձանագրութուն կազմելու (խուզարկուները և Գասպերչուկը շտապով թղթերը հավաքում են պայուսակներում):

Գասպ. — Գնանք ուրեմն:

Պրիստավ. — (Սարգսին մի կողմ քաշելով) Վերջին անգամ առաջարկում եմ ձեզ, ասացեք, վո՞րտեղ են գտնվում զենքերը:

Սարգիս. — Վերջին անգամ ասում եմ ձեզ, վոր այստեղ զենքեր չկան:

Պրիստավ. — Իսկ այս պայուսակները...

Սարգիս. — Յես գնել եյի, վորպեսզի դրանցով տեղափոխեյի իմ թուղթիկների ժողովածուն և գրքերը, վոր ձեր ձեռքը չնկներ խուզարկութեան ժամանակ:

Պրիստավ. — Համոզվեցե՞ք ուրեմն, վոր մեզ խաբել ամենևին չեք կարող... Մենք հազար ու մի միջոցներ ունենք ձեզ հաղթելու:

Սարգիս. — Դուք սխալվում եք, մենք ավելի շատ միջոցներ ունենք:

Պրիստավ. — Դուք հույս ունեք, թե կարող եք մրցել պետութեան կազմակերպված ուժերի հետ:

Սարգիս. — Պետութեան կազմակերպված ուժերը ժողովրդի զավակներն են:

Պրիստավ. — Թողեք այդ սոցիալիստական զառանցանքները, միևնույն է, դուք սխալվում եք. 1905 թիվը այլևս չի վերադառնա:

Սարգիս. — Կվերադառնա ավելի ուժեղ թափով:

Գասպ. — Մենք պատրաստ ենք, պարոն պրիստավ:

Պրիստավ. — Դե, գնացե՛ք ուրեմն և ձեզ հետ տարեք կալանավորին:

Սարգիս. — (Սաթենիկին) Մնաս բարով, շատ ել մի մտածիր:

Սաթեն. — Գնաս բարե (համբուրվում են):

Սարգիս. — (Բոլորին) Մնա՛ք բարով:

Պրիստավ. — Վերջին անգամ խնդրում եմ յեղբայրաբար, ասացե՛ք, վո՞րտեղ են պահված զենքերը:

Սարգիս. — Իմ յեղբայրը յերեք վոստիկան չեք կարող լինել:

Պրիստավ. — Ի՞նչ. վիրավորել ի՞նչ. յես քեզ ցույց կտամ, տասնյակ տարիներով բանտում կփթացնեմ. լույս չես տեսնի այլևս:

Սարգիս. — (Յերգում է) Սիրուն թիթեռ ի՞նչ ասա, թե ի՞նչով ես դու ապրում...

Պրիստավ. — Լո՛ր, անպատկան. ինչպես ես համարձակվում:

Սարգիս. — Իսկ դ՞ուք ինչպես եք համարձակվում:

Պրիստավ. — Գասպերչուկ, ի՞նչ ես կանգնել ապուշի պես, տար կալանավորին:

Դասպ. — Լսում եմ, պարոն պրիստավ:

Սարգիս. — Ցտեսութիւն սիրելիներս (գնում են):

Մարգո. — Տեսե՛ք, թե ինչ պնդերեսն ե:

Տ. Ղազ. — Ենքա քոթակ կտան, վոր պնդերեսութիւնը կըմոռանա:

Պրիստավ. — Շատ և շատ ներողութիւն, պարոն Գասպար Բարբառյան, վոր ձեզ անհանգստացրինք. յիս միանգամայն հավատացած եմ, վոր յեթե յերբեկցե դուք իմանաք զենքի տեղը, չեք հապաղի ինձ հայտնելու (Չղայնացած խփելով աղբի արկղին). յիս հաստատ հավատացած եմ, վոր՝ այստեղ զենքեր կան, բայց սատանան գիտե, թե վորտեղ են պահված. 30 տարի յե վոստիկանական պաշտոնյա յեմ և հոտառութիւնս այնպես և զարգացել, վոր վոչ մի շուն չի կարող մրցել ինձ հետ. իսկ այստեղ ուղղակի անհասկանալի կախարչութեան նման բան պատահեց... առհասարակ զալիս ես մի վորեւե տեղ խուզարկութեան և առանց զեւ ուղեն ընկնելու, առանց հարց ու փորձ անելու, բաց ես անում դուռը (արկղի խուփը բարձրացնում ե) և հայտարարում. այստեղ են զենքերը, կամ այնտեղ են ուումբերը... իսկ հիմա չգիտեմ, թե ինչ պատահեց, մի խոսքով... յերևի ծերութիւնս մոտեցել ե... յերկու ամսից հետո վերջացնում եմ իմ փալուն կարգերան. թողակ կընշանակեն և... կապուտ. ով վոր ինձանից յերկար ծառայի, թող նա ել պարծենա: Ժամանակները վատացել են, ժողովուրդը խելոքացել ե. (Սաթոյին) Ձեր ամուսնու բեխ ու մորուսը հագլիվ ե բուսել, և նա այդպես հանդուգն ե, համարձակ... տես ե, թե ինչ ահագին քանակութեան զրքեր ե կարդացել... և այդքան գրքերի մեջ վնչ ավետարան կա, վնչ աստվածաշունչ. իսկ զենքերը այնպես ե թաղցրել, վոր վոչ վոք չի կարողանում գտնել...

Տ. Ղազ. — Պարոն պրիստավ, գուցե տարել են զենքերը:

Պրիստ. — Վնչ, զենքերն այստեղ են, բայց թե, վորտեղ, չեմ իմանում... Դէհ, ինչեկցե, յիս հույս ունեմ, վոր տանուտերը այնքան բարի կլինի, վոր կիմանա զենքերի տեղը և մեզ կհայտնի... Ցտեսութիւն... (Սաթենիկին) Իսկ դուք, տիկին, վաղը ժամը 12-ին կբարեհաճեք գալ վոստիկանատուն՝ արձանագրութիւնն ստորագրելու... Ժամի քանիսն ե:

Բարբ. — (Նայելով վոսկի ժամացույցին) Ծիշտ չորսն և ժամի, տեսե՛ք՝ արդեն լուսանում ե:

Պրիստ. — Այո, այո լուսանում ե. . ցույց տվեք տեսնեմ, ինչպես ե լուսանում:

Բարբ. — Համեցե՛ք խնդրեմ (տալիս ե ժամացույցը):

Պրիստ. — Վոսկո՞ւց ե:

Բարբ. — Այո իսկական վոսկուց:

Պրիստ. — Այդ ել կավելացնենք խուզարկութեան ժամանակ գտնված ապացույցների վրա:

Տ. Ղազ. — Այո, իհարկե, անհրաժեշտ ե, ժամանակը վորոշելու համար:

Պրիստ. — Ժամանակը, ուղղութիւնը և քանակը վորոշելու համար... Ցտեսութիւն... Մաղսմ, բարի գիշեր, գնացե՛ք և հանգիստ քնեցե՛ք... Մի տարի շարունակ ձեզ վնչ վոք չի անհանգստացնի... յեթե յիս չկարողացա գտնել զենքերը, ել վոչ վոք չի կարող... Ցտեսութիւն.

Դասպ. — Պարոն պրիստավ, պարոն պրիստավ, շո՛ւտ, հասե՛ք.

Պրիստ. — Ինչ ե պատահել... ասա...

Դասպ. — Մենք տանում եյինք ձերբակալվածին յերկու վոստիկանի ուղեկցութեամբ, բայց նա անսպասելի կերպով խփեց վոստիկաններից մեկին, իսկ մյուսի աչքերի մեջ ավազ լցրեց և անհայտացավ:

Պրիստ. — Տխմար, իսկ դու ի՞նչ նետեցիր իմ աչքը:

Դասպ. — Վոչինչ չեմ նետել, պարոն պրիստավ:

Պրիստ. — (Ծաղրելով) Վոչինչ չեմ նետել, պարոն պրիստավ...

Հապա ինչու աչքերս ջրակալվեցին:

Դասպ. — Յերևի անքնութիւնից ե, պարոն պրիստավ:

Պրիստ. — «Յերևի անքնութիւնից ե»... հիմա՞ր...

Դասպ. — Ծճմարիտ այդպես ե, պարոն պրիստավ, 48 ժամ ե չենք հանգստացել:

Պրիստ. — Կանգնիր ուղիղ, ուր ե՞ ձերբակալվածը:

Դասպ. — Փա... փա... փա... փախավ:

Պրիստ. — Փա... փա... փա... փա...

Դասպ. — Փախավ:

Պրիստ. — Փախավ. (մոտենալով և բռնեցը դնելով նրա կզակին): Ո՞վ փախցրեց:

Դասպ. — Յես... յե...

Պրիստ. — Գտնել և իսկույն ձերբակալել:

Դասպ. — Յես... յե... յե...

Պրիստ. — Շուտ. (մյուսներին) Պարոնայք, մաղամ... (գերադառնալով խփում ե արկղին) յիս հավատացած եմ, վոր այստեղ ահագին քանակութեամբ զենք կա: (Գնում ե ու նորից վերադառ-

նում): (Սաթենիկին) Իսկ դուք չգիտեք, թե ուր կարող եր փախ-
չել ձեր ամուսինը:

Սաթեն. — Վհչ, պարոն պրիստավ. յես չգիտեմ:

Պրիս. — Յես կգտնեմ... Բ, իմ հոտառությունը...

Սաթեն. — Հոտառեցեք...

Պրիս. — Կհոտառեմ և կգտնեմ, այն ժամանակ վայ նրան:
(Գնում ու վերադառնում է և ապա բոլորովին գնում):

Մարո. — Տեսնում եք, ես Սարգիսը ինչ սեւերես, ինչ անվախ
ա, ե... բա վհչ փախավ:

Տ. Ղազ. — Յերեւի ընկերները մոտերքում սպասում էյին...
Մարգ իմանա թե ուր կարող եր փախչել:

Բարբ. — Իհարկե յուր նոր ընկերների մոտ, անարխիստների,
կամ սոցիալիստների մոտ:

Մարո. — Եհ, հիմա մարդիկ բոլորովին ամօթը կորցրել են...
(Բարբառյանին): Քոռանամ, ժամացույցդ ել տարավ են պրիս-
տավը:

Բարբ. — Տարավ, շատ ել լավ արեց... հապա վոր այս տեսակ
դժբախտությունից ազատվեցի, մի ժամացույց չարժի:

Տ. Ղազ. — Չմոռանաս աստծուն տված յերդումդ, մատաղ
արա...

Բարբ. — (Գրկելով նրան): Մեկի տեղը յերկուսը կանեմ. ու
քեզ ել վոտից մինչև գլուխ զարդարելն ել ինձ վրա լինի:

Տ. Ղազ. — Ահ, որհնյալ լինես և հիշյալ առաջի պատարագի.
յեթե ցանկություն ունես ֆարաջա, շուրջառ կամ փիլոն գնելու,
հարկավոր չի, յես հազուստեղեն շատ ունեմ, ավելի լավ ե՞ փող
տաս ինձ, կարիք ունեմ...

Սաթեն. — Ընկեր Թափանյան, յեկեք ոգնեցեք, մի եստեղ քիչ
կարգի բերեք, տեսեք սանդուղքս ինչպես պոկեցին. (Թափանյա-
նի ոգնությամբ հարմարեցնում է սանդուղքը, և մտնում են տուն):

Մարո. — Են անիծած խուզարկուն կարծում եր, թե սանդուղ-
քի տակին անպատճառ գնքեր կան:

Տ. Ղազ. — (Բարբառյանին) Առանց ինձ չտեղափոխես ես
զենքերը, յես ինքս կգամ քեզ ոգնելու, յեթե կարող ես, ինձ ել
գրիք կուսակցության անդամ: Յես վաղուց ե՞ ինչ ցանկանում եմ
ձեր շարքերում լինել:

Բարբ. — Ամենայն սիրով և ուրախությամբ, քահանաներ շատ
կան մեր շարքերում: Ձեզ նման մարդիկ մեզ հարկավոր են:

Տ. Ղազ. — Շատ և շատ շնորհակալ եմ... Դեհ, գնամ, արդեն
բոլորովին լուսացել ե:

Մարո. — Համեցեք, տեր հայր, չայ խմեք, այս բոպեյիս սա-
մովարը գցում եմ...

Տ. Ղազ. — Վհչ, շնորհակալ եմ, գնամ մի քիչ հանգստանամ,
թե չե՞ արդեն ծերացել եմ: (Ջանգերը խփում են): Փնոք քեզ
տեր, վոր հերկինս ես:

Մարո. — Տեր հայր, շատը համբերել եք, ինչքան ա մնացել,
հրես յեկեղեցի գնալու ժամանակն ա, համեցեք, ձվածեղ անեմ,
չայ խմեք ու հետո միատեղ գնանք յեկեղեցի, աղոթք անենք,
վոր իմ միջուճար երեխս աստված փրկե չարից:

Կաջյա. — Համեցեք, համեցեք, տեր հայր, յես գնամ սեղանը
պատրաստեմ (գնում է):

Տ. Ղազ. — Ենպես անկեղծ եք խնդրում, վոր անկարելի յե
հրաժարվել:

Բարբ. — Այ ետ շատ լավ ե, համեցեք, համեցեք:

Մարո. — Պարոն Թափանյան, դուք ել վերե համեցեք:

Թափ. — Շնորհակալ եմ, յես առհասարակ ձվածեղ չեմ սիրում...

Մարո. — Սիրում ես, չես սիրում — այդ միջնույն ե, ձվածեղը
յես պատրաստել էյի Կարոյի համար, բաս հո հմի դեն չեմ ածի:
Թափ. — Դե վոր բանը այդպես ե, գնամ մի կտոր ել յես
ուտեմ (գնում է):

Մարո. — (Մոտենալով Սարգսի բնակարանին): Սաթո, աղչի
Սաթո. Ի՞նչ ես շինում:

Սաթեն. — Տունը հավաքում եմ... տեսեք ինչպես ես տակն
ու վրա արել:

Մարո. — Կանեն, իհարկե կանեն, բաս թագավորին դավաճա-
նելը հեշտ բան ա... մեկ ել իմ սեւերեսինը չըլի, վոր բերել աղբի
յաշիկը արսենալ ա շինե ու առուտուրը չաղացրե:

Սաթեն. — Լավ ե, վոր չգտան տեղը...

Մարո. — Փառոց կենա տերտերը, նա շատ ոգնեց... մի կըռ-
նից մերոնց եր սիրտ տալիս, մեկելից ել են պրիստավին եր խոս-
քով անում... վրտեղից վորտեղ նրան աստված զրկեց եզ բարի
սըհաթին...

Սաթեն. — Պրիստավը հիմարի մեկն եր... ել չգիտեյի, վախե-
նամ, թե ծիծաղեմ, յերբ նա մոտենում եր յաշիկին ու գոռում,
թե այստեղ զենք կա:

Մարո.—Հնա, հնա, ել մի ասի, համա եդ բոլորը մի կողմը մնա, յես քեզ ասելիք ունեմ, հանաք չեմ անում, լավ ահանջ դի։
Սաքեմ.—Յես լսում եմ։

Մարո.—Յես, վորդի, քեզանից շատ մեծ եմ, շատ փորձված, շատ ու շատ բան ա անց կացել իմ բերախտ գլխովը...

Սաքեմ.—Հետո, հետո, Մարո տատիկ։

Մարո.—Հիմա դուք ջնջներդ ենպես եք կարծում, թե ինչ վոր անում եք, մենակ դուք գիտաք, թե ձեր գիղեցածը ուրիշի մտքովն ըսկի չի անցել, բայց սխալվում եք... ձեր արածները, ձեր մտքերը, մենք, այ եսպես (ձեռքի ափը բաց) պարզ տեսնում ենք ու հասկանում։

Սաքեմ.—Ախր, Մարո տատիկ. մի չասեցիր, թե խոսքդ ինչի մասին ա։

Մարո.—Յես վոր հետդ պարզ ու հալալ խոսում եմ, դու իդուր ես պոչդ շուռ տալիս, վորդի։

Սաքեմ.—Դե մի պարզ ասա, տեսեմ՝ ի՞նչ ես ուզում ինձանից։

Մարո.—Իմ վորդին, շատ լավ հայտնիյա, ողլուշաղի, երեխի տեր ա, ի՞նչ գործ ունի, վոր քշերը գալիս ա քեզ մոտ, դովրանը չաղացնում, իր բանն ու գործը մոռանում։

Սաքեմ.—Մարո տատիկ, բաս ինչի՞ եդ մասին իրեն հեղ չեք խոսում, հո յես չեմ գալի նրա դուռը, նայա գալի...

Մարո.—Ինչպե՞ս թե նայա գալի... դու կնիկ ես, թողնում ես, նա ել գալիս ա, յես իրեն հեղն ել եյի ուզում խոսի, համա ֆրոանդ չբերեց... համեկ վախենում եմ կնիկը բան իմանա... շատ լավ գիղես ինքդ, թե ինչ կապելու գիժ կնիկա, յերեխաներին կհավաքի ու ելի կփախչի հորանց տուն... են կնգա ախպերներն ել խոմ աչքով աչք չունեն երեխիս վրա, ափելի յեն գժվացնում, ասում եմ նրանց սրտովը չդառնաք, չթողնի են աղջիկը ու ելի չփախչի։

Սաքեմ.—Ելի լավ կանես, Մարո տատիկ, վոր քու վորդու հետ խոսես եդ մասին. նրան յես վո՞չ կանչել եմ, վո՞չ ել կանչելու միտք ունեմ. ճիշտա անցյալ գիշեր յերկար նստեց ինձ մոտ. համա յես մեղավոր չեմ, զանգատվում եր իր դժբախտ վիճակից։

Մարո.—Ինչի յա դժբախտ նրա վիճակը, մի տունը հրես երկու ետաժանի, փառք ասծու, կանգնած ա տեղը, մեկն ել աստոծ տա, մի-երկու ամսից հետո կրիշեն կծածկի, մազազինն ու

սկլաղն ել ապրանքով լիքը զնգզնգումա։ Ինչի՞ յա դժբախտ վոր, ելեքտրիչն ել բերեց, սաղ տունն ու բակը չբաղդան արեց։

Սաքեմ.—Յես ի՞նչ գիտեմ... իրանից հարցրու...

Մարո.—Թե կնգանից ա զանգատվում, դե ինչ անենք, նա ըլի, թե դու-դիմ մեկ ա, քածը, քածա ելի...

Սաքեմ.—Մարո տատիկ...

Մարո.—Ձե, բնլաս, դու մի նեղանա, յես քեզ չանգուելու մտքով չեմ ասում... յես բանի զորությունը շատ լավ գիտամ, յես ել եմ մարդ ունեցե, յես ել եմ լավ որ քաշե, ջնջելութուն արե... տղամարդը վոր կա, շատ քաշ արոնի տեր ոքմինա, նրա համար դիմ մեկ ա... հենց վոր արունը եփ եկավ, ել լաջն ու վատը, իրանն ու ուրիշները չի հարցնում։

Սաքեմ.—Մարո տատիկ, եդ բոլորը իդուր ես ինձ ասում— լավ թե վատ, յես քու տղին չեմ ուզում։

Մարո.—Բաս վոր չես ուզում, սիրուն ջան, արի ինձ անգաջ դի, տունդ դարգիկի, թող քու հոտը ես բալից կտրվի... նա ել մարդ ա, կհանգստանա, գիշեր ցերեկ չի գա պատուհանիցդ չի հոտհոտի, մինչև լուս տանդ չի նստի, մարդուդ ել չեր տանի, չեր բռնել տա կոմիտետում։

Սաքեմ.—Եդ վերջին խոսքը լավ ասացիր. յեթե յես իմանայի, վոր Գասպարը այնքան ստոր մարդ ե, վոր ինձ ձեռք բերելու համար՝ մարդուս բանտարկել կտա, կոմիտեյում ել նրա ատրճանակը կառնեն ու իրան ել կուսակցական դատի կենթարկեն—յես մինչև հիմա հաղար անգամ կը փախչեյի ես քանդված տնից, իսկ այժմ վոչ մի տեղ չեմ գնա, պետք ե, վոր մարդս իմանա բոլորը և նրա հախիցը գա։

Մարո.—Հետո, նրա վերջը ինչ կլինի, մի մտածիր ե։

Սաքեմ.—Ինչ ուզում ե, թող լինի, յես կորցնելու վոչինչ չունեմ... մարդս եր—կոմիտեյից ազատվեց—հիմա յեկ նրա զենքերին և զո՞հ գնում։

Մարո.—Ինչի՞ զո՞հ գնաց, ռեմը զո՞հ գնաց. Գասպարը մեղավոր ա, վոր նա ենքան թղթերը բերել, տունը լցրել ա, հետեից ել պրիստավին կոպիտ պատասխաններ ա տալիս ու վերջն ել ավազը ածում ա խալսի աչքերն ու փախչում։

Սաքեմ.—Բաս ինչ աներ, վոր չփախչեր... գնաք բե՛րդը։

Մարո.—Ինչ ա վոր, բերդումը քիչ մարդ ա նստած։

Սաքեմ.—Լավա, ելի... դե թող քու տղեն ել գնա նստի բերդումը։

Մարո—Իմ տղի ու քու մարդի մեջ մենք սարեր կան: Գասսպարը խմբապետ ա, քու մարդը հասարակ զինվոր ա, մեկը խազեյին ա, մյուսը նոքար, մեկը խաղաղ ու հանգիստ իրան տանը նստած, մյուսը փախստական... Բա իմ վորդու թայն ա՛ քու մարդը... Աբա արշինդ բեր, մի չափենք...

Սարեն.—Դե վոր եդ տեսակ անգին վորդի ունես, ծափ տուր պար արի... ել ինչո՞ւ յես ինձ տանից դուրս անում...

Մարո—Ա՛րի, խոսքս լսի, սիրուն ջան, քեզ համար ել լավ ա, ինձ համար ել...

Սարեն.—Թե չլսեմ...

Մարո—Տես, վոր վերջը չփոշմանես:

Սարեն.—Կաշխատեմ չփոշմանել, Մարո տատիկ: (Գնում է):

Տ. Ղազ.—(Իջնում է սանդուղքից յերգելով): Մեր հայրենիք, թշվառ անտեր, մեր թշնամուց վտանակով... Մարո տատիկ, գալիս էս յեկեղեցի:

Մարո—Գալիս եմ, գալիս, տեր հայր: Ախչի Կատուշ, հենց ապրես, մի շալս ներքև գցի:

Բարբ.—Կատուշը պառկեց քնելու, դու ո՞ւր ես գնում վոր:

Մարո—Ասում եմ՝ գնամ մի յերեսըս խաչ հանեմ, մի քանի մոմ վառեմ Մարիամ աստվածածնի առաջ, վոր մեզ փրկի ամեն ցավից:

Թափ.—Արի, արի, Մարյամ տատիկ, թե չե՛ մուշտարի չունենք. առավոտները չորս պատի մեջ մենակ ենք աղոթք անում. կամ դու յես մեր մշտական հյուրը, կամ երեցփոխի կնիկը:

Մարո—Գասպար ջան, շալս բի մի, հենց ապրես, արի դուռն ել կողպի:

Թափ.—Տունս տակն ու վրա արին. դեռ չեմ հավաքել. լսվ, ուսումնարանից կգամ, հետո կհավաքեմ... ես որ լավա, յերկու դաս ունեմ միայն:

Տ. Ղազ.—Լավ պարապի յերեխաների հետ, քաղցր վարվիր, վոր կրոնը լավ սովորեն, թե վոր վատ վարվես, յերեխաները չեն սովորի կրոնի դասը:

Թափ.—Սաղ քաղաքը ման արի, թե իմ աշակերտներից հավատամքը կամ թե պատարագի ծիսակատարությունը լավ իմացող գտնես...

Բարբ.—Ճիշտ է, ճիշտ. եդ յես ուրիշներից ել եմ լսել:

Տ. Ղազ.—Չասես, թե ինձ գինին ե խոսացնում, լսվ իմացիր, վոր յես քեզ շատ եմ հարգում:

Թափ.—Շատ շնորհակալ եմ: Ամեն ջանք գործ եմ դնում. կրոնը բարոյականության հիմքն է, յեթե կրոնը յերեխաներին լավ են ավանդում, ուրեմն հույս կա, վոր ազգն ել նրանցից վերջի վերջո ոգուտ կստանա: (Ջանգերը նորից դողանջում են):

Տ. Ղազ.—Լսում ե՞ք տին-տոն, տին-տոն, ժամանակ է:

Թափ.—Ժամ է, ժամանակ վոտքի յեղնելու:

Մարո—Դե, համեցեք, տեր հայր:

Տ. Ղազ.—Վո՛չ, վո՛չ, դուք առաջ անցեք, ցտեսություն:

Մարո—Վո՛չ, վո՛չ, դուք...

Տ. Ղազ.—Ցտեսություն:

Բարբ.—Ցտեսություն:

Տ. Ղազ.—Գասպար ջան, չմոռանաս, ինչ վոր խոստացար կուսակցության մեջ ընդունել տալու մասին:

Բարբ.—Ջուխտ աչքիս վրա: (Գնում են: Գասպարը մոտենում է Սաթենիկի պատուհանին, հետո գնում է դեպի Թափանյանի բնակարանը. այդ միջոցին Սաթենիկը կողովով թղթեր է տանում դեպի արկղը, վոր դեն ածի):

Սարեն.—(Բարբառյանին): Ի՞նչ ես ուզում:

Բարբ.—Քո սերը, ահա մի շաբաթ ե... քեզ եմ ասում. հասկացիր. մի դժբախտացնի վո՛չ քեզ, վո՛չ ինձ:

Սարեն.—Դժբախտացնել, քեզ:

Բարբ.—Այո. դժբախտացնել... Դու պետք է իմը լինես:

Սարեն.—Յիւրեք յես չեյի կարող յերևակայել, վոր մարդ այդ աստիճան ստոր կարող է լինել... միթե չես ամաչում... այդքան ստորությունից հետո դեռ ելի կարողանում ես հանգիստ խոսել:

Բարբ.—Ստոր եմ թե ազնիվ, այդ միևնույն է: Դու պետք է իմը լինես. յես առանց քեզ չեմ կարող ապրել...

Սարեն.—Լավ, կտեսնենք:

Բարբ.—Սպանում ես:

Սարեն.—Դու կսրժում ես, թե յես սպանալու առիթ չունեմ... մի մոռանա, թե ինչ տմարդի կերպով մատնեցիր ամուսնուտ:

Բարբ.—Մատնեցի...

Սարեն.—Այո, այո, մատնեցիր, ուզում եյիր ճամբիցդ հեռացնել, կարծելով, վոր այնուհետև հեշտ է ինձ ճանկդ գցել. Սխալվում ես, յես քո գիտցած կանանցից չեմ. յերևի սովորել ես եթանագին հաղթանակներ տանել. աղախնի անկողինը մտնել. առանու կար ու ձև անողից համբույրներ կորզել...

Բարբ.—Ինչ վոր կնոջս հիվանդ յերևակայությունը հնարի, դուն ել կրկնի...

Սարեն.—Սեղճ կին. յերևակայում եմ, թե վճռքան դժբախտ ե նա, վոր քեզ նման ստոր մարդու հետ ե կապել յուր կյանքը, յուր ապագան...

Բարբ.—Նրա հորն ողորմի, քաղցած զկրտում եյին տնով տեղով. յես եմ շունչ տվել. այն յեղբայրն ել, վոր ճաշից հետո, վոչ բարով, մեծ մարդ ե դարձել ու քիթը վեր ե քաշում...

Սարեն.—Բնա՛ս առա վոտով գլխով առել ես ելի—թե կնգանդ ու թե նրա ընտանիքը:

Բարբ.—Առել եմ, հապա ինչ ես կարծում. հաղարներ եմ ծախսել. բայց նրանք ապերախտ են գտնվել իմ առաջ, քու մարդու նման:

Սարեն.—Իմ մարդը ինչո՞վ ե քու առաջ ապերախտ գտնվել:

Բարբ.—Մոռացել ե հա՛, թե ինչ որումն եր, ինչպես յես նըրան գործ տվի, տուն ու տեղի տեր դարձրի ու այժմ սոցիալիստ ե դարձել, ծառայողներին գրգռում ե իմ դեմ:

Սարեն.—Հիմա յես հասկանում եմ իսկական պատճառը, թե ինչու համար նրան կոմիտեն տարար ե բանտարկել տվիր:

Բարբ.—Վոչ թե դրա համար տարա, այլ սպասում եյի, վոր դու հավատաս ե լավ իմանաս, թե ձեռիցս ամեն բան կարող ե դուրս գալ...

Սարեն.—Եդ ճիշտ ե, քո ձեռից ամեն մի ստորություն դուրս կգա, բայց իմացած կենաս, վոր յես ել տեր ու տիրական շատ ունեմ...

Բարբ.—Ովա՛մ, ո՞վ քո տերն ու տիրականը:

Սարեն.—Ա՛յ կտեսնես... ծամբաս մի կտրիր:

Բարբ.—Ուրեմն անդ ե քո վերջին խոսքը...

Սարեն.—Ամենավերջին:

Բարբ.—Իսկ յեթե (աշխատում ե գրկել Սարենիկին):

Սարեն.—(Պաշտպանվելով): Թո՛ղ, թո՛ղ ինձ...

Բարբ.—Ձե՛, չե՛, դու իմը պետք ե լինես, յես առանց քեզ...

Սարեն.—Ինչպե՛ս թե առանց ինձ (պայքարում ե):

Կասյա — (Վոր վաղուց լսում եր, վերելից իջնում ե ցած): Ա՛յ մարդ, այ, անդգամ... բավական չեղավ...

Բարբ.—Լրտեսում եյիր, հա՛...

Կասյա — Գոնե մի փոքր ամոթ ունեցիր յերեսիդ:

Բարբ.—Ի՞նչ ամոթ. յերբ յես սիրում եմ, գժված եմ:

Սարեն.—Սիրում ես... վոչ, քեզ նման մարդիկ ի՞նչ գիտեն, թե սերն ի՞նչ ե. դու ուղղակի ավազակի նման հարձակվում ես...

Կասյա — Ինձ ել եյիր սիրում, աղախնի՛ն ել, կար անող կնոջն ել, Սարենիկին ել...

Սարեն.—Յեվ վոչ մի ստորության առաջ չես կանգ առնում քո կեղտոտ կրքերին հագուրդ տալու համար:

Բարբ.—Իհարկե, դուք կանայքդ անմեղ հրեշտակներ եք, իսկ մենք՝ հրեշներ:

Կասյա — Դու մասնավորապես հրեշից ել ստոր ե զաղրելի յես... մի ամիս սրանից առաջ ծնկաչոք աղաչում, պաղատում եյիր ինձ, վոր ներեմ քեզ, հավատացնելով, թե ամեն բան վերջացել ե. յերեխաներիդ մասին եյիր խոսում...

Սարեն.— Իսկ ինձ մի յերկու որ առաջ հավատացնում եր, թե պատրաստ ե իմ մի համբույրի համար զոհելու թե կնոջը ե թե յերեխաներին:

Բարբ.— Դե՛, բավական ե, ինչպես տեսնում եմ, դուք խոսք եք կապել՝ ինձ բուրբովին վոչնչացնելու համար...

Կասյա — Դու յես, վոր ամենքիս զոհ ես բերում քու բմահաճույքներին:

Բարբ.— Բավական ե, ել վոչ մի խոսք... յես արգելում եմ խոսել. գնացեք ձեր բանին... յես գիտեմ, թե ինչ կանեմ...

Սարեն.— Վոչ, մենք ել պետք ե գիտենանք. յես քեզ նախազգուշացնում եմ... յեթե յերբեկից ճամբես կտրես, կամ համարձակվես գալ դռանս կանգնել, այն ժամանակ յես ուրիշ կերպ կվարվեմ...

Բարբ.— Ի՞նչ կանես, չի՞ կարելի իմանալ:

Սարեն.— Կտեսնես. (գնում ե):

Բարբ.— Դու ի՞նչ կասես:

Կասյա — Կասեմ, վոր քեզանից ավելի ստոր մարդ չի յեղել ե չի ել լինի... Այսօրվանից մեր մեջ ամեն ինչ վերջացած համարի՛ր... ել չհամարձակվես գալ, վոտքերս ընկնել... աղաչել, պաղատել... վերջացավ, կես ժամից հետո դու ինձ այստեղ ել չես տեսնի... Մնաս բարով. արն, ինչ ուզում ես:

Բարբ.— Գնան բարով, բայց տես, վոր չտուժես... տես, վոր վերջը գլխիդ վնյ չտաս:

Կասյա — Ում վախեցրել ես, գնա ելի նրանց վախեցրու... (մտնում են Գարշոն ու Վանիչկեն):

Դարչո. — Բարի լուս, անդա Գասպար:

Վանիչ. — Խո իմացա՞ք, երեկ ի՞նչ դավի դառաբա ընկավ մեր թաղը:

Բարբ. — Իմացա...

Դարչո. — Ասում են, մթամ ձեր տունն ել են որիսկ արե...

Վանիչ. — Խոմ վոչինչ չեն գտե...

Բարբ. — Ի՞նչ կա, վոր ի՞նչ գտնեն:

Դարչո. — Բաս յես գլխի չեմ ընկնում, թե ի՞նչի Սարգիսը եղ թավուր բեհեաբ նամադուլ արեց ու փախավ ճամբիցը:

Բարբ. — Վորովհետե ջահել ա ու հիմար:

Դարչո. — Խալխն ասում ա, թե դադաղա ա, գրքեր մթամ շատ են գտել մոտը... ախպեր, գիրքն ել դադաղա կլի...

Վանիչ. — Վահ, գիտա՞ք ի՞նչ ոյին սարքեց... սաղ աշխարքը շապիկ փոխնով դուրս եյին թափվե (Սաթենիկը յերևում ե): Շատ լոթի մարդ ես ունեցել, աստո՞ծ գիտենա, ոչովի մոքով չեր անց կենա եղ բանը... եղ թավուր ել մազալու բան. հենց վոր ծովում են մեր քուչեն ու մեր տան չափարը, մի գարադավոյի աչքինա ավազ ածում, մեկելի սփաթինա թրխկացնում, ստարշի աղալոդ-չիկին ել բոթում ա ու ինքը դրա մեր չափարը...

Սարեն. — Հետո՞. հետո...

Վանիչ. — Իժում դվեր թռավ դրա մեր բաղը... յես չափարի տակը քնած եյի — ասի, հալրադ գողերը եկել են լհերս տանեն, մեկել են տեսնեմ, սվխտոկները շվշվացրին, իրար ընկան՝ գեր-ժի, հա գերժի, համա ի՞նչ գերժի, մի նմուտումը կտուրը բարձ-րացավ, ընտեղան ել թռավ հարեանի հայաթը ու հայդա, դրա շխտանց թաղը:

Դարչո. — Մալադեց տղա, յես ու իմ աստո՞ծը, հալալ ա նրա կերած հացը,

Վանիչ. — Վոր տեսնեյիր, թե են գարադավոյները վոնց եյին հակալ - հակալ ընկե:

Դարչո. — Են աղալողչիկը խոմ գլխի մագերը պոկում եր. գիփ են եր ասում, շտո՞ գելիմ, շտո՞ գելիմ...

Վանիչ. — Ե՛, մախլաս, աշխարքա, էլի...

Դարչո. — Հալրաթ... մարդ ասի, թե ուր գնաց:

Վանիչ. — Հնգերներ կունենա էլի, գլուխը քաշ դրա մի կուռը կգնա:

Բարբ. — Վոչ մի տեղ ել չի կարող գնա. եզուց - ելոր կբռ-նեն, աչքը կհանեն, ալիլի խխտ կպատեն:

Դարչո. — Ո՛վ գիտա, մեղա՞ քեզ, աստո՞ծ, եսքան տարվա մարդ եմ, համա ես թավուր բան նոր եմ տեսնում, վոնց վոր երևումա, աշխարքի վերջը մոտենումա...

Վանիչ. — Ի՞նչ վերջ. յես տեսնում եմ, վոր աշխարքի հե-քյաթը թաղադանա սկսվում, չիմացար, թե ի՞նչեր եյին յերգում են թաղա խաղումը, — մենք, ասումա, հին աշխարքը պտի քան-դենք ու նրա տեղը թաղեն շինենք — բան:

Դարչո. — Լավ, լավ, դրա վախտը չի, արա Գասպար աղա, հրա-մայել եք, վոր ես որ առուտեհան գանք փողի համար, աչ եկանք:

Բարբ. — Բաս չեք իմացե՞լ, վոր գիշերը տունս որիսկ եր, իսկի տանից չեմ դուրս յեկել, չեմ ել պառկել, վոր հանգստանամ, վճրտեղից պետք ե փող ճարելի:

Դարչո. — Բաս ի՞նչ անենք:

Վանիչ. — Մախլաս, վախ եկելա ու մեղ տարե:

Բարբ. — Ա՛յ, դուրս գամ փողոց, տեսնեմ, թե բան կընկնի ձեռքս կբերեմ, կհասցնեմ ձեզ:

Դարչո. — Լավ, գեթաղվա, չմոռանա՛ս. երեխես ել հիվանդա-ցելա...

Վանիչ. — Դեհ, մենք գնանք բանի:

Կասյա. — Ա՛յ, դարձյալ մի որինակ քո ստոր ե անաղնիվ վերաբերմունքի: Ի՞նչու ես տանջում այս մարդկանց. քանի որ ե՛ գալիս են փողի, իսկ դու փողը ձեռքիդ, ուղղակի անխիղճ կեր-պով տանջում ես այս խեղճերին:

Դարչո. — Վա՛, վոնց թե:

Վանիչ. — Տեսնում ես:

Բարբ. — Քոռացե՞լ ես. չտեսա՞ր, վոր Կարոն յերեկ ունեցած փողս տարավ:

Կասյա. — Վոչ, դու յես խիղճդ կորցրել, յերեկ մինչե Կարոյի գալը հավատացնում եյիր, թե փող չունես, ես որ ել նույնն ե:

Դարչո. — Տո՛, եղ ես ասում, թե խմբապետ եմ, հայ քրիս-տոնյա յեմ:

Վանիչ. — Լավ քրիստոնեությունա, յես ու իմ աստո՞ծը, սաղ երկու շաբաթա եսոր եզուց ես զցում ու մեղ քաղցած կոտորում:

Բարբ. — Ի՞նչ վոր ես չուն շան աղջիկն ասում ե, դուք ել հավատում եք: Աստված, յերկինք, չունեմ, յեղբայր, բայց խոս-տանում եմ այսոր անպատճառ փող ճարեմ ու բերեմ քեզ տամ:

Դարչո. — Մենակ խոմ մենք չենք. մի տասը բանվոր յես ունեմ, մի հինգ հոգի ել վանիչի մոտ են բանում:

Վանիչ. — Ամենքն ել ողորդող, երեխերք ունեն:

Բարբ. — Յես գիտեմ, յեղբայր, դուք հանգիստ և ապահով կացեք... Ես որ, եզուց անպատճառ փող կհասցնեմ ձեզ: Մասալեն ել կասեմ բերեն, նրան ականջ մի անեք, նրանք տնով տեղով, զիպին ել սոցիալիստ, բունտով չչիկներ են:

Կասյա. — Իհարկե, մենք բունտով չչիկներ ենք, բունտ ենք անում քեզ պես անասովածներին դեմ, բաս չե, քեզ պես անխիղճ ու անասոված կլինենք... փողը տանը դրած ըլի ու դու խալխին քաղցած ման ածես:

Բարբ. — Հեռո՞ւ են հիւսիս փողն ա. վոր տանը դրած ա:

Կասյա. — Քոննա, քոնը:

Բարբ. — Սուտ ես ասում, դա կուսակցութեան փողն ե:

Կասյա. — Դու յես սուտ ասում. դա քոն փողն ա. քոն սեփական փողը:

Բարբ. — Չայնդ կտրիր:

Կասյա. — Ի՞նչ պտի անես:

Վանիչ. — Ախպեր, են գլխից ես գլուխ յես ես մարդուն չհաճնեցի, ու արա արի ու տես... ղորթ վոր հախվերմազն ա ելի:

Դարչո. — Աստված ինքը հեռու պահի ամեն կրակից... եղ թավուր կրակից:

Վանիչ. — Երեկ, եսոր, են թավուր եր լաց ըլում. վոր քիչ եր քնում հագիս շորերը հանել եյի ու իրան եյի բախշե:

Դարչո. — Ինքը վոր խմբապետ ա, հենց գիդա, թե մոնք նրա ճորտերն ենք ու մութթա կաշխատենք:

Վանիչ. — Հմի ինչ ես ասում. պարուն, փողը տալիս ես, թե չե:

Բարբ. — Ի՞նչ քանա:

Դարչո. — Մի քսանհինգ թուման վոր տաս, հերիք կանի:

Բարբ. — (Հանում ե գրպանից բումաժնիկը) Առ ես յեռեսուն թումանը. բաժնիր, հաշիվը վերջացրու: Ուրիշի փողն եմ տալիս, հա: Ինչ լինելու յե, թող լինի. թող այսոր վեքսելներս պրոտեստի գնան:

Կասյա. — Սուտ ես ասում, վոչ փողն ա ուրիշինը, վոչ ել վեքսելներդ են պրոտեստ գնում. ամեն բանում ել եզպես ես. մինչև գլխիդ կակալ չկոտրեն, չստիպեն, դու պարտքդ չես կատարի:

Բարբ. — Լավ, լավ, ձեռք փորդ գցի. ամանչի, յեթե յերեսիդ մեռն կա...

Կասյա. — Մեռնը վոր մարդու արուտ տա՞ր...

Բարբ. — Դուրս, այստեղից, դուրս...

Կասյա. — Իհարկե, կերթամ ու հույս ել չունենաս, վոր առաջվա պես վերադառնամ:

Բարբ. — Կվերադառնաս, ջանդ ել դուրս կգա:

Կասյա. — Գլուխդ ել վոր քարովը տաս, չեմ վերադառնա:

Բարբ. — Կտեսնենք:

Կասյա. — Կտեսնենք (գնում ե):

Բարբ. — (Սաթենիկին) Սպասիր, սպասիր, յես քեզ հետ գործ ունեմ:

Սաթեն. — Յես քեզ հետ վոչ մի գործ չեմ ուզում ունենալ (գնում ե):

Դարչո. — (Վանիչին) Ա՛րի, արի, անպեր, գնանք, մենք տեսանք, աստոճ ուրիշին շանց չտա ես որը (գնում են):

Մարո. — (Մանելով) Ողորմի աստված: Խեղճ Սարգարի տունը տակն ու վրա յեն արել. ինչ թոփ ու թվանք պատրոն ա ունեցել, զիփ ել դրոգն են ածել, ու իրան ել բռնել բերդն են ղրկել... (մոտենում ե վորդուն, կիսաբերան) ասում են մթում, ամեն բանի պատճառը Տեր-Ղազարն ա, նա ա մթում մատնե:

Բարբ. — Ի՞նչ, Տեր-Ղազարն ա մատնե:

Մարո. — Գուրբերնատորի կշտին ասումա, խոսքը անցա կենում:

Բարբ. — Ո՞վ ասաց:

Մարո. — Երեցփոխի կնիկը, նա ել եր ժամ եկե... Տղեն ու աղջիկն ել, ասումա, թաքուն ծառայում են «ընդեղ» ու մեծ ուժձիկ են ստանում:

Բարբ. — Ծճմարիտ... հապա ի՞նչ անենք... Նա մեր տունն ու տեղը, քունջն ու պուճախը իմանում ե. վոր ուզենա, մի բոգեյում մեզ կկորցնի, գետնի հետ կհավասարեցնի:

Մարո. — Իսկի ել մի վախենա... ատկազ արա, ասա թե յես վոչինչ չեմ գիդա. Սարգիսն ել խոմ փախել ա, ամեն բան գցի վրեն:

Բարբ. — Ախար եղ զենքերը մի յերեք-չորս հազարի կարողություն ա...

Մարո. — Կարողությունը քեզանից լավա՞ն. յեթե, բանա, իմացվի, դու ատկազ արա, ու խաղեյին մարդ ես, դու քու տուն ու տեղի դարդն ունես. աշխատում ես, քոն առուտուրի համար:

Բարբ. — Ախր նրանց հիվ ասեց, նրանք վորդիանց գիդան:

Մարո. — Ինչ վոր բոմը գցողներ են մատնել, իմացվելա... տղեն, ասումա, փախելա՝ գլուխը կորցրել... աղջիկն ել ահից

կպելա պատին. գծվելու վրա յա: Մթոմ նամակ են ստացել, թե դուք մատնիչներ եք. տնով տեղով ձեզ պետքա կործանենք:

Բարբ. — Թափանջանը իմացել է այդ բոլորի մասին:

Մարո. — Իմացելա չե, ասում եմ՝ երեցփոխի կնիկն ասեց ինձ թաքուն ու խնդրեց, վոր ոչովի բան չասեմ... տերտերակինը երեկ եկելա մողը, արտասուքը աչքերին սիրտը բաց արել...

Բարբ. — Լավ: Լավ, դու ել սուս արա, վոչ վորի մոտ բերանիցդ խոսք չթողնես. այդ Լավ եղավ, վոր մենք գաղտնիքը իմացանք. քիչ աշխարհը հանգստանա, յես ես զենքերը կվերջացնեմ ու... ել գլուխս քարով կտամ, վոչ մի բանի մեջ չեմ խառնվի, ինչ վոր ունեմ, այն ել ինձ բավական է:

Մարո. — Հալբաթ վոր, վորդի, ի՞նչ ես անում ավելի հարստությունը, դու քու առուտուրին մուղայիթ կաց, դուքանդ մենձացրու, սկլադներդ լքցրու... խմբապետությունից ել Լավա, գնդապետությունից ել...

Բարբ. — Դե, մի վերե գնա, տես, թե հարսդ ինչ ա կատաղել, ելի ուզում ա փախչի. տես, թե կարող ես, համողիր քո կողմից. իմ անունը չտաս, վոր կենա...

Կասյա. — (Իջնում է մի յերեխա խտտին, իսկ մյուսի ձեռքը բռնած): Չեմ քնա: Չե, իզուր տեղը նեղություն մի քաշի. են վոր առաջին անգամը յետ եկա, են ել գլուխս քարովը տվի...

Մարո. — Վայ, քոռանամ, Կատյա ջան, ախր ել ասելու բան ա, վոր դու ասում ես, մարդ ու կնկա մեջ անհամություն շատ կը պատահի. հենց ենա ամենքը պտի վեր կենան, թե գնում ենք հորանց տուն...

Կասյա. — Բա վոր հորանցս տուն չգնամ, ուր գնամ,

Մարո. — Վայ, քոռանամ:

Կասյա. — Երեկ վոտս կոտրվել էր, ու ըսկի ել չեյի եկել ձեռք քանդված ոջախը... ձեզ նման խալիս...

Մարո. — Ամոթա, ամոթ. Կատյա ջան, երկու երեխի տեր կնիկ ես:

Մանիբակ. — Տառիկ. Խաժակի համար առած պերճանքները դիք ել յես կերա:

Մարո. — Շատ ել Լավ արեցիր, հոգս նրա գլխին:

Մանիբակ. — Նա ամեն որ ել պերճանքիս ուտում...

Մարո. — Ուտումա ու չի կշտանում...

Կասյա. — Հենց ցափն ել ես ա. վոր յերկու յերեխի տեր կնիկ եմ... թե չե... ափսոս վոր պսակիս տակից՝ հենց ժամից չփախա...

Մարո. — Ի՛, ըրմանաս դու...

Կասյա. — Հիմի եսպես դժբախտ չեյի լինի... (ուզում է գնալ):

Մարո. — Ուր ես գնում, աղչի:

Կասյա. — Ուր վոր գնում եմ, եղ յես գիտեմ:

Մարո. — Չե, չե թող եղ սարսաղությունները, հենց ապրես, Կատյա ջան, Կատյա, ախր խալիս ի՞նչ կասեն. դե մեկ անգամ բաժանվեցիր, բավական ա... ել հո ամեն որ չպիտի բաժանվեք ու բարձր...

Կասյա. — Շատ ճիշտ ես ասում... յես պետք է գլուխս քարովը եյի տվել ու առաջին անգամ հեռանալուց հետո չեյի վերադարձել...

Մարո. — Ի՛, ըրմանաս դու. շատ ել Լավ արիր, վոր վերադարձար ու դուշմանի աչքը հանեցիր...

Կասյա. — Իմ ամենամեծ դուշմանը իմ մարդն ա, վոր վոչ խիղճ ունի, վոչ ել նամուս...

Մարո. — Աղչի, սիրուն ջան, դու երեխա յես դեռ, Լավ չես հասկանում աշխարհի բանը... Տղամարդը վոր կա, շուն ա, շուն, խելքի արի...

Կասյա. — Յես շան հատը չեմ... յես պտի գնամ:

Մարո. — Չե, չե. խելք աղջիկ ես, բայց հիմար բան ես ասում... դու պետքա քու յերեխաների մասին մտածես:

Կասյա. — Այ, մտածում եմ, ելի, կտանեմ: Կհեռացնեմ եղպես հորից:

Մարո. — Չե, չե, յես համաձայն չեմ. բաս յերեխին հոր ձեռիցը խլել կլի:

Կասյա. — Նա ի՞նչ հեր ա, նրա նման հորը չունենալը ավելի Լավա, քան թե ունենալը:

Բարբ. — (Վոր մինչև այժմ թաքնված սանդուղքի տակ լսում էր, դուրս է գալիս): Ա՛ շուն ու շան աղջիկ, չես հավանում, հա: Բաս վոր քաղցած հորդ ու մորդ պահում եյի, Լավ եր. բաս վոր յիղբորդ տարա, ճակտին կակարդ կպցնել տվի, Լավ եր...

Մարո. — Լավ, Լավ. սուս կաց. աշխարհ մի մող անի գլխին. րիս. եկեք, եկեք, գնանք վերե... տանը խոսեցեք...

Մանուբակ. — Ելի պերճանքի կանոնս, Մարո տատիկ:

Մարո. — (Բռնելով նրա ձեռքը) գնանք, գնանք. սիրուն ջան, պերճանքի ել կանոնի քեզ համար, սառուշաքար ել:

Կասյա. — Թող, թող, յես ել վերե եկողը չեմ:

Մարո. — Ի՞նչ ես գծվե, աղչի:

Կասյա. — Թող յերեխի ձեռքը:

Բարբ. — Գնում ես՝ գնա. ջառը գնաս, ջհանդամը, յես յերեխեքիս չեմ թողնի, վոր տանես:

Կասյա. — Ինչպէս թե չես թողնի...

Բարբ. — Այո, չեմ թողնի:

Մարո. — Ներս, ներս եկեք. ամոթա, հրես սաղ թաղը կհավաքվի:

Բարբ. — Տուր յերեխան...

Կասյա. — Չեմ տա, չեմ տա...

Բարբ. — Վհնց թե չես աա (խլում է. իրարանցում):

Կասյա. — Տուր...

Բարբ. — Կարող ես կորչել:

Կասյա. — Յերեխեքս, յերեխեքս... (Ատրճանակի ձայն. ներս ե ընկնում Տ. Ղազարը՝ առանց գլխարկի, մաղերը գզգզված, աղաղակելով):

Տ. Ղազ. — Ոգնեցեք, ոգնեցեք... սպանում են... մի տեղ տվեք: (գնում է գեպի Թափանջանի բնակարանը և անհայտանում արտաքնոցում):

Մարո. — Վա՛յ քոռանամ, ի՞նչ եղավ:

Սարբեմ. — Ի՞նչ պատահեց:

Կասյա. — Ի՞նչ է:

Դիմակավոր. — (Մտնում է ատրճանակը ձեռքին): Ի՞նչ յեղավ, ուր գնաց տերտերը:

Բարբ. — (Վոր նոր ուշքի յեկավ): Ո՞վ էք:

Դիմակավոր. — Յես ձեզ ճանաչում եմ, գիտեմ, վոր դուք կուսակցական եք:

Բարբ. — Դա՛նակցական խմբապետ եմ:

Դիմակավոր. — Յես ձեր տիտղոսների մասին չեմ խոսում, յես ուզում եմ գիտենալ, թե ուր գնաց տերտերը:

Բարբ. — Տերտերը, այստեղ չէ:

Դիմակավոր. — Զգուշացեք, հեղափոխականին վայել չէ թաքցնել մի քահանա:

Բարբ. — Այդ ինքն ըստ ինքյան, բայց այստեղ իմ բնակարանում տերրորի յենթարկել մարդու...

Դիմակավոր. — Նա մատնիչ է և լրտես:

Մարո. — Հա, հա, վորդի, յես ել եմ լսել:

Դիմակավոր. — Ուրեմն...

Բարբ. — Այստեղ անկարելի յէ. խուզարկութիւնը հենց նոր վերջացավ (ծածուկ մի կողմը տանելով) Թաքցրած զենքերը չկա-

բողացան գտնել, յեթե այստեղ մի վորեւե դժբախտութիւն պատահի ..

Դիմակավոր. — Վոչ թե դժբախտութիւն, այլ բախտավորութիւն, վոր մատնիչից կազատվենք:

Բարբ. — Վոչ այստեղ... յես դա՛նակցութեան կուսակցութեան անունից պահանջում եմ...

Դիմակավոր. — Լավ. մենք նրա հետ ուրիշ տեղ կպատահենք... բայց դուք զգուշացեք. առայժմ (գնում է):

Մարո. — Շատ ել լավ կանեք, փառք քեզ, աստված, ես ցավից ել ազատվեցինք:

Բարբ. — Նրանք իրավունք չունեն իմ տանը մարդ սպանելու, վորովհետեւ ես խմբապետ եմ. (կնոջը) տեսնո՞ւմ ես ինչ մարդկանց հախիցն եմ գալի... դու ել զգուշացիր... ինձ հետ հանաք անելը ենքան ել հեշտ բան չի... յես շատ մեծ մարդ եմ:

Կասյա. — Գուցէ մեծ մարդ ես, բայց մի կողակի աղնվութիւն չունես...

Բարբ. — Ինչպէս թե աղնվութիւն չունեմ:

Կասյա. — Հապա ինչո՞ւ յես մեզ զոռով պահում եստեղ:

Բարբ. — Քեզ զոռով պահել... սխալվում ես. յես յերեխաներիս եմ ուզում պահել:

Կասյա. — Իսկ առանց յերեխաների, դու շատ լավ գիտես վոր ես չեմ գնա:

Բարբ. — Ուրեմն մնա և խնայիր յերեխաներիդ:

Կասյա. — Շատ բարի, կմնամ. բայց տես վոր չփոշմանես:

Բարբ. — Յեթե շատ զահլես տանես. իմացիր, վոր գյուլլախորով կանեմ...

Կասյա. — Դու գյուլլախորով անող մարդ չես, դու գյուլլա ծախող չարչի յես... յես քո հախիցը տես, թե վո՞նց եմ գալիս:

Բարբ. — Դուք, դուք իմ տանից. գնա կորի. տար քու լաւ կոտներին ել... գիտեմ, վոր քու վերջը բողոքութիւնն ա:

Կասյա — Ավելի լավ է մարդ բողոքութիւն անի, քան քեզ նման դյաղայի հետ նամուսով ապրի (բռնելով յերեխայի ձեռքը): Գնանք (գնում են):

Մարո. — (Տերտերին) Դուքս արի, դուքս, մի վախենա, գնաց. (բաց է անում արտաքնոցի դուռը):

Տ. Ղազ. — Գնաց: (նստած է մինչև կոկորդը արտաքնոցի փոստում):

Մարո. — Վա՛յ քոռանամ, ես ի՞նչ որումն ես:

Տ. Ղազ. — Ձեռքդ, ձեռքդ տուր. Գնասար ջան...

Բարբ. — Ինչ ես գնացել, մտել եղ ծակը. ումնից ես վախե-
նում...

Տ. Ղազ. — Յերբեմն մկան ծակն ել հաղար թուման արժի.
դնաց...

Բարբ. — Գնաց, գնաց:

Մարո. — Հանի, հանի, ֆառաջեղ դիփ կեղտոտվելա:

Տ. Ղազ. — Հրաշք եր, ելի... (հանվելով) իմ ես որվա պրծնելը:
Հրաշքով պրծա:

Մարո. — Արի, արի ձեռներդ լվա (մոտեցնում է ջրի ծորակն)
լվա. լվա... միրուքդ ել. միրուքդ ել... լվա... փիֆ... հոտը աշ-
խարք ա բռնե...

Տ. Ղազ. — Շնորհակալ եմ. շնորհակալ եմ... ես վոչինչ, հոտը
անց կկենա, Մարո տատիկ, հոտը անց կկենա: Ինչ լավ պրծա ե.
ձի եր են ափղահան... երեսը տեսաք... դիմակ եր դրիւ. Հենց վոր
ժամից ծովեցի դրա ձեր բուշեն... կրակեց վրես, յես փախա, ելի
կրակեց. լավ եր ձեր դուռը բաց եր...

Բարբ. — Ինչ են ուզում քեզանից ե:

Տ. Ղազ. — Դու, ասումա, լրտես ես... տնով տեղով մատնիչ-
ներ եր, ասումա... տղաս վեր կացավ, ահիցը փախավ... աղջիկս
ել խելագարվելու վրա յա...

Բարբ. — Եղ թավուր շուն շան վորդկերանցը մատնելը իսկի
ել մեղք չի:

Տ. Ղազ. — Շնորհակալ եմ, Գնասար ջան, դու աղատեցիր
ինձ ես դժբախտությունից... յերեկ իմ գլուխը քեզ ելի պետք
կգա... ձեռքդ, ձեռքդ տուր. ինչպես ասածա, ձեռքը. ձեռք ե
լվանում:

Սարեն. — (Վոր մինչև այժմ ներս ու դուրս եր անում, տու-
նը կարգի բերում է միևնույն ժամանակ հեռում եր բակում
կատարվող գործողություններին), Տեր հայր, ճիշտ ե, վոր ձեռքը
ձեռք կլվանա, բայց մի մոռանա, վոր հաճախ յերկու ձեռքերն ել
կեղտոտ կարող են մնալ:

Մարո. — Տես, թե եղ անդամը ինչ լեզու ունի:

Տ. Ղազ. — Նրանցից ե, նրանցից... պետք է մեջքը կոտրել...

Մարո. — Շատ ել լավ կանես...*)

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

Ա Ր Ա Ր Վ Ա Մ Յ Ե Ր Ր Ո Ր Դ

Տեսարանը նույնն է: Վարագույրը բարձրանալու ընթացին աղբի
արկղն ընկած է բակի մեջ տեղը: Վանիչկան և Դարչոն արկղի
սովորական տեղում զենքեր թաքցնելու համար փորած փոսը
լցնում են քար ու ավազով, աշխատելով վոչնչացնել հետքերը:
Յերեկո յե: Սարգիսը ծպտյալ աղբ է ժողովում:

Դարչո. — Մերն ասում եր, թե ել յարող չպիտի ծախի, շատ
դադաղայա, ասումա: Համ ել մթամ թե հմի ուզումա, վոր գնդա-
պետ ձեռնադրեն ու թե գնդապետին վայել չի, վոր եղ թավուր
բաներ անի:

Վանիչ. — Ախպեր, յես վոչինչ չեմ հասկանում... (աղբի
արկղը դնելով տեղը և մի քանի մեխ խփելով) ճվա են գնդապետ
ձեռնադրողը... ախր սա ինքը մի վախլուկ մարդա, էնա տրաքա-
խա. յափնջի յա վրեն գցում, պատրոնդաշ կապում, ուրիշ վոչինչ...
են մեկել շաբաթ, վոր բաշխիկները կես միլիոն տարան երևան-
սկի պլոշադումը... մի տեսնեյիր, թե վոնց եր սփրթնել, լեղա-
ճաք ելի... ենենց եր դողացնում, կասես վրեն սառը ջուր եյին
ածե... յախիցս բռնեց, վոր դուքան հասցնեմ. դուքանը կողպել
տվեց ու շտապով տուն քաշվեց...

Դարչո. — Իրա մենձերին, մթամ, շատ փողա ուտացնում:

Վանիչ. — Վա, յես չեմ հասկանում. թե եղ վոնց ազգի բանա,
վոր փող ուտացնելով են գլուխ բերում...

Դարչո. — Յես խոմ վոչինչ չեմ գիտա... խալխն եր ասում...
մթամ եղ դուքանն ել դիփ ազգի փողերով...

Վանիչ. — Տեսնեք, թե սրա վերջը ինչ կլի, յես իմ կարճ
խելքով վոչինչ չեմ հասկանում:

Դարչո. — Կնիկն ել փախելա... շատ, շատ փիս, նամարդ
մարդա...

Վանիչ. — Բաս են աջը կոտրած գնդապետ ձեռնադրողը մի
փեքը չի անում, վոր ես թավուր մարդուն հայոց ազգի մեհնա
նշանակում:

Դարչո. — Դե մի վերե գնա, իմաց տու, բանը վերջացրինք... տես, թե գեղեն ինչ կասի...

Վանիչ. — Լավ, դու ել ինչկի յարադները մոտ արա (բարձրանում ե վերե, Սաթենիկը մտնում ե):

Դարչո. — Բարրիդհն:

Սաթեն. — Բարե. (տեսնելով Սարգսին) բիճա ջան, եկել ես...

Սարգիս. — (Ծպտյալ) իմա՛ն չգամ: (Ուզում ե շալակել քթոցը):

Սաթեն. — Կաց, մի քիչ աղբ ունեմ, բերեմ՝ ածա քթոցդ, հաց ել կտամ:

Սարգիս. — Աստված քեզի կյանք տա, քեզի ազատե ամեն փորձանքից... Մշո սուլթան սուրբ Կարապետ...

Սաթեն. — Ա՛ռ, այս ել դատարկի:

Սարգիս. — (Դատարկում և արկղը վերադարձնում):

Սաթեն. — Ա՛ռ, այս ել քեզ հաց ու պանիր:

Սարգիս. — Աստված քո ճամբորդին սաղ-սալամաթ անի... աստված... մուղաթ կաց... ես որ վերջին որնա... պատրաստ յեղիր... վաղը պիտի փախնենք Ռուսաստան...

Սաթեն. — Յես պատրաստ եմ...

Սարգիս. — Քեզի թավախկա կենեմ, խանութից փարես առնիս:

Սաթեն. — Լավ, լավ, փարադ չի կորչի: (Սարգիսը առնում ե քթոցը և գնում):

Դարչո. — Վհնցա, վհնց մարդդ... խաբար չունեմ:

Սաթեն. — Բարե եր ուղարկել բոլոր ծանոթներին...

Դարչո. — Գանա ըստի չի...

Սաթեն. — Չե...

Դարչո. — Բաս յերեք-չորս որ սրանից առաջ յես, ասեմ, տեսա Նավթլուղում...

Սաթեն. — Հա՛ ա, չգիտեմ...

Դարչո. — Տո, ինձանից ի՞նչ ես վախենում, յես խո՛մ շարուն չեմ... դու շատ լավ գիտաս, թե վհնց ենք սիրում նրան, վոր ըտենց իգիթութուն արեց... փախալ, գլուխը ազատեց... դուրթա, մենք գիր չենք կարդացե, համա մեր սրտով, մեր ուղուփով խելքի յենք ընկնում՝ ո՛վա դրուստը, ո՛վա ծուռը (բռնելով ձեռքը ծածուկ): Բաս դորթա՛, ասում են մթամ տերտերն ա քանդե ամենքի տունը, մթամ նա յա մատեն... սաղ մեր թաղավորին:

Սաթեն. — Ա՛յո, շատ բաներ են ասում:

Դարչո. — Բաս ընչի յա ես սեվերեմը, մեր Գառպարը, նրա կուռը...

Սաթեն. — Յերեի յուր պատճառներն ունի...

Դարչո. — Ասում են, մթամ, թե սրան չի մատնել ու պրծացրել ա բերդից:

Սաթեն. — Դե ասում են՝ ձեռքը ձեռք ա լվանում: (Մտնում են թափանջանը և յերկու դաշնակցական զինվորներ):

Թափան. — Սպասեցեք այստեղ: (Դարչոյին) Հը՛, չվերջացրի՞ք:

Դարչո. — Վերջացրինք, ա՛յ, Վանիչին գնացելա՛ իմաց տա... եսա գնում ենք:

Թափան. — Լավ, փողներդ՝ կգաք եգուց կստանաք...

Մարո. — (Ցած իջնելով) Պրծաք հա՛, լավ, լավ... Կարող եք գնալ. (Վանիչին) կիրակի որը մատաղ ունենք են նոր տանը, կգաս դոնադ. (Դարչոյին) դու ել կգաս... եղ յարադներդ ել տարեք...

Թափան. — Եգուց կգաք դուքան, վերջնականապես հաշիվներդ կմաքրեք:

Դարչո. — Լավ, լավ, սաղ ըլեք...

Վանիչկա. — Բարի գշեր. (Գնում են):

Մարո. — Ա՛ղչի Սաթո, եկել ես:

Սաթեն. — (Յուր տանից) եկել եմ.

Մարո. — Առավուտից աչք եմ պահում, (մտնելով նրա բնա-կարանը) քեզ հետ շատ խոսելիք ունեմ...

Թափան. — (Զինվորներին) նախ և առաջ հարկավոր ե գործել ամենայն զգուշությամբ... յեթե, աստված վոչ անի, բռնվեք, պետք ե ասեք, վոր եղ կնոջ հետ կապ եք ունեցել, այժմ իբր թե, զավաճանել ե ձեզ... հասկանում եք:

Ա. զինվոր. — Հասկացանք:

Թափան. — Յեթե հարցնեն, թե գիտե՞լիք արդյոք, վոր Բար-բառյանի կիներն և, ասացեք...

Ա. զինվոր. — Կասենք՝ չգիտե՞լինք:

Յեղ. զինվոր. — Ինչպե՞ս թե չգիտե՞լինք... հապա զինվորը յուր խմբապետի կնոջ չի՞ ճանչնար:

Թափան. — Հենց բանն ել այդ և, վոր պետք ե աշխատեք չկապել այդ սպանությունը կուսակցության հետ:

Յեղ. զինվ. — Ըսել ե՞ գործենք իբրեւ վոճրագործներ... յեթե այդ սպանությունը կուսակցության ջրաղացին ջուր չի ավելացնեք, հապա ինչո՞ւ սպանենք...

Ա. զինվ. Ե՛հ, քեռի Մինաս, շատ ես գուր տեղը խոսում, կատարիք, յերբ կուսակցությունը հրամայում ե:

Յերկ. զինվ. — Յես ել հենց կուսակցութեան պատվերն եմ ուզում կատարած լինել. վորպես զի դահիճները ճանկն ընկած ժամանակ՝ կարողանամ բացերես արտահայտվել:

Թափան. — Բայց կան արտակարգ հանգամանքներ, յերբ կուսակցութիւնը ստիպված է լինում գաղտնի պահել տերորի պատճառները:

Յերկ. զինվ. — Այդ տեսակ արտակարգ պայմանների մասին յես առաջին անգամն եմ լսում:

Թափան. — Ե՛հ, քեռի Մինաս, ծերացել ես և վախկոտ դարձել:

Յերկ. զինվ. — Յես վախկոտ... դուք ի՞նչ գիտեք, պարոն Թափանյան վախն ինչ է, քաջութիւնն ինչ. նստած այստեղ արտաքնոցի մոտ կպարարտանաք ու կայլասերեք մանուկ սերունդը կրոնի գասերով... վո՛չ, յես վախկոտ չեմ, և վո՛չ լալկան ծերունի: Մի ամիս է, ինչ վոր վերադարձել եմ յերկրից և նորից պատրաստ եմ ծ-րդ անգամ գնալ կռիվ, բռնութիւնը տապալելու, սակայն իմ սիրտը, իմ հոգիս, իմ ուղեղը, ամեն անգամ գործ կատարելիս՝ ինձ հարց կուտա. ինչո՞ւ, հանուն ծրագրի վո՞ր կետի կամ իմաստի... Ի՞նչ կշահենք...

Թափան. — Յես չգիտեմ, ինձ հրամայված է ղեկավարել, և յես կատարում եմ գնդապետի հրամանը:

Յերկ. զինվոր. — Իսկ յես չեմ ցանկանում կատարել անձնական հրամաններ. մի գնդապետ, վոր մաքսանդաններին կեղեքելով տըներ կկոտուցե... ինձ Բաթում ըսած են այդ գնդապետի սխրագործութիւններու, Սարգիսին դատի յենթարկելու, այդ մատնիչ քահանային պաշտպանելու մասին... Թող չմոռանան նա յուր արարքները, դեռ պատասխան չտված, այժմ ել ցանկանում է յուր կնոջը վո՛չնչացնելու... ինչո՞ւ, հանուն ծրագրի վո՞ր կետի, ի՞նչ կշահենք:

Թափան. — Ուրեմն դու չես ուզում յենթարկվել կուսակցութեան հրամանին:

Յերկ. զինվոր. — Վո՛չ, քանի վոր այդ հրամանը անձնական միտումներով կտրվի:

Թափան. — Դա քո վերջին խոսքն է:

Յերկ. զինվոր. — Վերջինը:

Թափան. — Կալանավորվում ես. գնա՛ք:

Յերկ. զինվոր. — Ձեռքս կառնե՞ք ձեռքես:

Թափան. — Ըստ գնդապետի կարգադրութեան:

Յերկ. զինվոր. — Լավ, ստացե՛ք, մենք զենքեր շատ ունենք:

Թափան. — Անցիր իմ բնակարանը և սպասիր դատի:

Յերկ. զինվոր. — Ո՞վքեր պետք է դատեն ինձ. կրոնուսույց վարժապետները, մատնիչ տերտերները. թե իսկապես հեղափոխականները:

Թափան. — Ում վոր կուսակցութիւնը կնշանակի:

Յերկ. զինվոր. — Լավ, նստենք և սպասենք կրոնավորաց վարժապետի հրահանգներին:

Թափան. — Գնա և սպասիր (գնում է):

Առաջ. զինվոր. — Ի՞նչ կարիք կա յերկու հոգու. մի քած է, կերթամ կիսիւմ և... ուղիղ դեպի խոջեվանքի մատուռները:

Թափան. — Վոր բռնվե՞ս:

Առաջ. զինվոր. — Յերեք մարդ եմ սպանել, չեմ բռնվել. հիմա պետք է բռնվեմ:

Թափան. — Իսկ յեթե բռնվե՞ս:

Առաջ. զինվոր. — Ձեմ բռնվի:

Թափան. — Յեթե բռնվե՞ս:

Առաջ. զինվոր. — Կասեմ՝ իմ սիրուհիս եր, սպանեցի:

Թափան. — Ասա, յերբ վոր մարդը գնում էր դուքան, յես գալիս եյի մօտը... հետո, ասա, մարդը իմացավ ու դուրս արեց, նա ել, ասա, ինձանից ձեռք ա քաշում...

Առաջ. զինվոր. — Բաթում վոր գնամ, փող կտան:

Թափան. — Բաթում՝ մի գնա, կգնաս Մանգլիս. քեզ փող ել կտան, տուն ել... կասես, վոր հիվանդ ես...

Առաջ. զինվոր. — Լավ... յես գնում եմ... ես որ, եզուց ամեն բան պատրաստ կլինի (գնում է):

Թափան. — Ո՞ւր ես գնում:

Առաջ. զինվոր. — Եսպես ճանապարհը ավելի կարճ է, համ ել նրա կացարանը յերեւում է... փոսի մօտ:

Թափան. — Ինչպես տեսնում եմ, դիրքերը լավ ես ուսումնասիրել:

Առաջ. զինվոր. — Առանց ուսումնասիրութեան հաջողութիւն չի լինի:

Թափան. — Ճշմարիտ ես: Ուրեմն վերջնականապես սլայմանավորվեցինք, ամբողջ պատասխանատվութիւնը քեզ վրա յես սպանութիւնը անհատական բնույթ է կրում... նյութական վարձատրութիւնը, վորքան կհարկավորվի, մեզ վրա յենք վերցնում: Դե ցտեսութիւն: (Ձինվորը գնում է այգու միջով, իսկ Թափանյանը մտնում է յուր բնակարանը: Սաթենիկը դուրս է գալիս)

Ջրամանը ձեռքին—Չուր վերցնելու, նրան հետևում եմ Մարո տատիկը):

Մարո.— Խեղճ աղջիկ ես, արի լսիր ինձ... ել մի հակառակվիր...

Մաքեն.— Մարո տատիկ, բայց չեմ ամաչում, մազերդ սպիտակել են, իսկ դու ինձ ինչեք ես սովորեցնում:

Մարո.— Բնա ջան, մինչև մազերս սպիտակելը հազար կուժ ու կուլա ա կոտրվել գլխիս. հազար ցավ ու չոռ ա անցկացել. դու ջեր ջահել ես, դու ինչ գիտես, թե աշխարհումը ինչ կա:

Մաքեն.— Ինչ ել լինի միևնույն ե աշխարհը ինձ չի կարող ստիպել, վոր յես անառակություն անեմ:

Մարո.— Բայց, աշխարհը դող ու բողի աշխարհ ա. ում վրեն մատը դրեց, ամեն բան ել կստիպի, վոր անի...

Մաքեն.— Ինձ չի ստիպի:

Մարո.— Յես մենակ քո մասին չեմ ասում, սիրուն ջան, յես ամենքի մասին եմ ասում:

Մաքեն.— Յես վոչ մի գործ չունեմ ամենքի հետ:

Մարո.— Ի՞նչ, ըրմանաս դու. բայց մենակ ես աշխարհում ապրել կլի՞ք. քինթն երեսիցը կկտրվի:

Մաքեն.— Ե՛տա, ելի, յես վոր քու տղի սիրեկանը չգառնամ՝

Մարո.— Իմ տղի սիրեկանը չգառնաս, ուրիշներինը կգառնաս... բայց ջհել աղջիկ ես, վո՞նց պետք ա ապրես... Մարդդ գնաց կորավ... թե յետ ել գա, պետք է բռնեն, տանեն բերդը պցեն կամ Սիրիսը դրկեն... ինչ կանես հետո...

Մաքեն.— Իմ դարդս քեզ չեն տվել:

Մարո.— Յես, դուռտն ասած, քու դարդունք ել չեմ... յես իմ վորդու դարդունք եմ... բաց ասեմ, վոչ ամաչեմ, վոր քեզ գժի պես սիրում ա ու առանց քեզ գժվում ա... դու շատ լավ գիտաս, վոր յես ինքս հակառակ եյի, միտդ չի՞, վոր քանի անգամ խնդրեցի քեզ, վոր հեռանաս մեր տանից, բայց վոր չհեռացար, յես ինչ գիտեմ, դու յես մեղավոր, թե՞ նա. յես եմ ասում, վոր յեթե խոսքներդ մեկ անելիք... հմիկ նրան, իմացած կլես, գնդապետ են կարգադրում: Խաժակը խոսք ա տվել, արդեն ամեն բան ել լավ կգնա... ոչով ել վոչինչ չի իմանա. ու ամեն բան ել սուս ու փուս մեր տանը կմնա... քեզ մարդ ա պետք, նրան ել կնիկ, պրծավ գնաց:

Մաքեն.— Մարո տատիկ, յես քեզ վերջին անգամ եմ ասում, քո միտքդ յերբեք չի իրականանա... Շատ սխալվում ես, դու ինձ դեռ չես ճանաչում:

Մարո.— (Բարկացած) բայց վոր եդ տեսակ միտք չունեցիր, ինչո՞ւ եյիր տղիս բերում տանդ գցում, սաղ գշերներ հետը ասում, խոսում, ու կնգանից բաժանում:

Մաքեն.— Յես նրան վոչ տուն եմ գցել, վոչ ել բաժանել... վերջացավ մեր խոսակցությունը. ել չգաս իմ տունը (գնում ե):

Մարո.— (Սանդուղքի տակից յերևացող Թափանյանին) լսեցի՞ր, վո՞նց սրած թրի պես վեր կտրեց:

Թափան.— Լսեցի, տեսնում ա, վոր Գասպարը անտարբեր չի, սա ել քիթը ավելի ա վեր քաշում:

Մարո.— Հարկավոր ե քեթին ենպես խփել, վոր իր որումը չմոռանա:

Թափան.— Կխփենք, արխեյին կաց:

Մարո.— Մեկ ել են եմ միտք անում, թե մարդը ըստեղարենք խոմ չի, վոր սա եսպես հանգիստ, խաղաղ, վոչինչ այնումը չի գցում ու մի խոսքին տասը պատասխան ա տալիս...

Թափան.— Ձե, չեմ կարծում. մարդը ըստեղ լինի. լինի ել՝ ռվա վախենում նրանից. նա կուսակցությունից արտաքսված ա արդեն, շատ զահլա կտանի, գլուլեն կտանք դոշին ու շան սատակ կանենք:

Մարո.— Դալբաթ ուրիշ գամին ունի:

Թափան.— Ձեմ կարծում, միակ գամինը Գասպարի սերն ե:

Մարո.— Մի վախենա, տերտերի հետ ել շատ շեշ ու բեշա անում:

Թափան.— Ձե. տերտերի փորացափե ել ուրիշ կլինի... յերեկ ուղումա մի խոսք գուրս քաշի ու մարդու տեղը իմանա:

Մարո.— Ո՞վ գիտա. մի ժամանակ Գասպարն ել մարդու պատճառով եր գնում գրա մոտը. բայց վերջը բանն ուրիշ տեսակ շուռ եկավ:

Թափան.— Արխեյին կաց, Մարո տատիկ. տերտերը սրան չի խլի Գասպարի ձեռից:

Մարո.— Բանը խելը չի. յես գարմանում եմ, վոր Գասպարը մինչև հիմա ձեռք չի քաշում եդ անպիտան տերտերից, վորը տարավ ենքան մարդու մատնեց, գցեց տերության ձեռքը:

Թափան.— Ձեռք քաշել չեր կարելի. ախր ենքան դենքեր կային տանը: Իսկ տերտերը գիտեր ամեն բան:

Մարո.— Ա՛յ, տարան դենքերը, հեռացրին. տեսնեմ հիմա ինչպես եք ձեռք քաշում:

Թափան.— Կքաշենք, կքաշենք. ամենադժվարը գենքերի տեղափոխելն եր... յես գնամ մի իրեն մոտ, դեռ շատ բան ունենք անելու, շատ մարդու հախից ենք գալու...

Մարո. — Վայ քուսնամ, ենա ասում եյի գնդապետ կդառնա, ամեն բան կը թողնի, հանգիստ խաղաղ տանը կնստի:

Թափան. — Եղ ժամանակն ել շատ հեռու չի. մի յերկու ամիս ժամանակ տուր:

Բարբառ. — (Մտնում ե) Դեռ այստեղ ես...

Թափան. — Խոսքով յեղա Մարո տատիչի հետ. այն ցնդված ծերունին ահագին դալմադալ ե բարձրացրել, չի ցանկանում կատարել հրամանդ:

Բարբառ. — Ինչո՞ւ:

Թափան. — Ասում ե՛ անձնական միտումներից ե ըզխում քո հրամանը, ու թե՛ ծրագրային հրահանգի մասին այս դեպքում չի կարելի խոսել:

Բարբառ. — Վարտեղ ե ինքը:

Թափան. — Բանտարկեցի իմ բնակարանում:

Բարբառ. — Տուր ինձ ատրճանակը, ինքդ շտապիր խմբագրատուն թափակը գա թե չե, կասես, վոր զենքերը պատրաստել ենք ե սպասում ենք նրա կարգադրությունը: Բերանիցդ խոսք չթուցնես, թե զենքերը ինձ մոտ ելին պահած մինչև հիմա, հասկացա՞ր. զինը կասես 7109 ուերլի: Շտապիր. (մորը) դու ել գնա վերև, բանիդ կաց:

Մարո. — Գասպար ջան, բա ասում եյիր, վոր ել զենքի տուտուրով չպիտի պարապես:

Բարբ. — Սպասիր, մի յիղածը վերջացնենք ե:

Մարո. — Վերջացրու, վերջացրու, ջանիդ մեռնիմ ու են անաստոծ տերտերին ել ճամբու դի:

Բարբ. — Ի՞նչ ե, ելի բան ես խմացել:

Մարո. — Սաղ աշխարհը նրա մասին ա խոսում, վոր տալով ենքան մարդկերանց կորցրեց:

Բարբ. — Քիչ համբերիր, գուցե ուրիշ կուսակցություններն անեն նրա գատաստանը:

Մարո. — Դե գիտես, վորդի. յես ասում եմ՝ վերջը քեզ ել մի շառի մեջ չգցի...

Բարբ. — Տեսնենք, ինչ կլինի վերջը... սպասիր մի զենքերս սաղացնեմ... (գնում ե զենքի թափանջանի բնակարանը ե վերադառնում ե յերկրորդ գինվորի հետ).

Մարո. — Դե գիտես վորդի, ամեն բան թող քու կամքով ըլի, յես մի գնամ, երեցփոխի կնիկը կանչել եր:

Բարբ. — (Յերկրորդ գինվորին) Գլուխը քարովը տվեց, յերեսն ել պատովը, վոր համարձակվեց քեզ բանտարկել կամ ատը-

ճանակը ձեռքիցդ առնել. յես նույն իսկ վճուել եյի քեզ ուղարկել յերկար ժամանակ հանգստի, վորովհետև կարծում եմ՝ բավական հոգնած կլինես... դու ինքդ ասացիր, վոր անգործությունից հոգնել ես... առ ատրճանակդ, յես նրան պատվիրել եյի, վոր քեզ մանրամասն բացատրի գործի եյությունը... ի հարկե արտաքուստ կարծես թե այդ սպանությունը անձնական միտումներով ե կատարվում, սակայն գործի եյությունը հետևյալն ե. կինս շատ լավ տեղյակ ե կուսակցության կյանքին. իմանում ե ավելի շատ, քան թե հարկավոր եր նրան իմանալ, այժմ յես սարսափում եմ, յերբ մտածում եմ, վոր նա կարող ե մի դժբախտություն բերել զըլխընդին,

Յերկ. զինվ. — Վախենում ես մասնությունից:

Բարբ. — Յեթե միայն ինձ մատնելը լինի, այդ վոչինչ, նա սպանացել ե ամբողջ կուսակցությունից վրեժ առնել:

Յերկ. զինվ. — Իսկ նախազգուշացնել անկարելի՞ յե:

Բարբ. — Վոչ մի դեպքում, շրջապատված ե սոցիալիստներով, վորոնք պատրաստ են...

Յերկ. զինվոր. — Իսկ տեր Ղազարից յերկուղ չե՞ս կրի:

Բարբ. — Շատ... բայց ինչ արած... ի հարկե, անհրաժեշտ ե նրան ես վոչնչացնել, բայց վախենում եմ... ինչ ե իցե նրա վերաբերմամբ պետք ե սպասել:

Յերկ. զինվոր. — Այժմ տես, թե վոր աստիճանի կույր քաղաքագետ ես դու, վոր ետը վաղը պետք ե գնդապետ լինես մեր զլխին... Ինչպե՞ս կարելի յե այդ աստիճան տմարդի լինել... կամ թե դու կարծում ես, թե մենք տուն, տեղ, ընտանիք, վորդիք թողած՝ նրա համար ենք սար ու ձոր ընկել, վոր դու մեզ քո կըրպակի հաշիվներին ծառայեցնե՞ս...

Բարբ. — Յես չեմ հասկանում:

Յերկ. զինվոր. — Յես չեմ զարմանում, կրպակատեր գնդապետը հեղափոխությունը կնայի յուր համբիշի տեսակետից, դու կնոջդ ուղում ես անհապաղ վոչնչացնել. վորովհետև քեզ անձնական փաստ կարող ե հասցնել. իսկ քահանային խնայում ես, առանց ի նկատի ունենալու, վոր արդեն հարյուրավոր կյանք ե թունավորել... Սակայն բավական ե, այն ձայնը, վոր կու գա Ռուսաստանի սառցապատ հորիզոններից. թե «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք», այն պետք ե լինի մեր միակ փրկության ճանապարհը:

Բարբ. — Ինչպես ես թե, դու ե՞լ:

Յերկ. զինվոր.—Այո, յես ել և ինձ նման շատ շատերն ել... դու կարծում ես՝ ինձ, Սարգսին բանտարկելով կամ խանութիցդ դուրս անելով՝ կարող ես հանգցնել հեղափոխությունը... Սխալվում ես...

Բարբ.—Ուրեմն գնամ ազգս ուրանա՞մ և սոցիալիստ դառնա՞մ:

Յերկ. զինվոր.—Հապա մենք մոռանանք և՛ մեզ, և՛ մեր ընտանիքը և քո կրպակի շահերին զոհվե՞նք:

Բարբ.—Իմ կրպակն ել ժամանակին հայ ազգին կարող եր պետք գալ:

Յերկ. զինվոր.—Առայժմ հայ ազգն և պետք գալի կրպակիդ...

Բարբ.—Ինչպե՞ս թե:

Յերկ. զինվոր.—Այնպես. մտածիր այդ մասին, քանի ուշ չես...

Բարբ.—Յես կարծում եմ, վոր վատ չեր լինի, յեթե դու ել մտածեիր ասածներդ վրա: Ամոթ ե դաշնակցական զինվորից սոցիալիստական քարոզներ լսել:

Յերկ. զինվոր.—Իսկ ամոթ չե՞ դաշնակցական հարյուրապետին՝ յուր կրպակի կեղտոտ հաշիվները...

Բարբ.—Բավական և ծերուկ...

Յերկ. զինվոր.—Կարող ես նորից բանտարկել:

Բարբ.—Վհչ, յես քեզ հարգում եմ, ավելի լավ ե՞ գնա, մի փոքր հանգստացիր և հետո...

Յերկ. զինվոր.—Հետո:

Բարբ.—Յեվ հետո յերկար ու ավելի մանրամասն կբացատրեմ քեզ իմ ծրագրերները:

Տ. Ղազ.—(Մտնում ե) Բարի յերեկո ձեզ, հավատացյալ քրիստոնյաներ:

Բարբ.—Աստծո բարին:

Յերկ. զինվոր.—Լավ կապտեսե՞մ՝ մինչև այս հուղայի հեռանալը (մտնում ե Սարգսի բնակարանը):

Բարբ.—(Սարսափած) Ահա թե ինչ, ուրեմն սրանց պոչերը մի տեղ են յեղել թաղված, չեյի սպասում...

Տ. Ղազար.—Ձեռքերդ տեղափոխեցիր:

Բարբ.—Այո տեղափոխեցի:

Տ. Ղազար.—Ո՞ւր տարար:

Բարբ.—Նավթուխ, մի մեծ դատարկ...

Տ. Ղազար.—Բարի, բարի, ուրեմն այժմ արդեն հոգիդ ազատեցիր ամեն տեսակ պատասխանատվությունից...

Բարբ.—Դու ինքդ լավ գիդես, թե ինչ մեծ նշանակություն ունի ինձ նման մարդու համար կուսակցություն հրահանգը:

Տ. Ղազ.—Ասում ես ուրեմն, թե կուսակցությունն և հրամայել, վոր զեռքերդ տեղափոխես:

Բարբ.—Կուսակցությունը...

Տ. Ղազ.—Բարի, բարի... Հապա լսել եմ, վոր մինչև այժմ կուսակցությունն իբր թե վոչինչ չե իմացել քո ունեցած զեռքերի մասին:

Բարբ.—Ինչպե՞ս թե...

Տ. Ղազ.—Այնպես, ասում են, վոր այդ զեռքերը դու բերել ես տվել ու զանազան մարդկանց վրա ծախել... գուցե այդ դեպքում կուսակցականի կոչումն ես շահագործում:

Բարբ.—Յես վոչինչ չեմ հասկանում:

Տ. Ղազ.—Իսկ յես շատ լավ եմ հասկանում: Ձեռքի առուտուրը շատ ոգտակար զբաղմունք ե... մանավանդ, վոր Պաժակի հետ ել շատ լավ հարաբերություն մեջ ես:

Բարբ.—Ո՞վ ե քեզ ասել այդ բոլորի մասին:

Տ. Ղազ.—Իզուր ես տաքանում... յես ու դու հայոց ազգի հսկայական սյուներն ենք և մեր գոյությունը իրար պաշտպանում ենք, յեթե մենք իրար դիպչենք, կամ մեզանից մեկն ու մեկը կործանվի, վողջ հայ ազգն ել կկորչի, ավարա սոցիալիստների ձեռքը կընկնի: Միտքդ չի, սրանից յերկու-յերեք շաբաթ առաջ յես քեզ ինչ ասացի. «ձեռքը ձեռք ե վանում»... Յես իմ ձեռքը քեզ վաղուց եմ մեկնում... դու ինձ չես վստահում... վախենում ես... ինչից յես վախենում... այն դիմակավորների շայկեն այլևս չկա (Սարգիսը մտնում ե ծպտյալ) բոլորին ել գյուլլախորով անել տվի... 905 թիվը մեռավ... այ քեզ իմ ձեռքը, տուր քոնը, վոր ձեռք ձեռքի տված՝ փրկենք մեր ազգը...

Բարբ.—Բայց արբ...

Տ. Ղազ.—Յեթե կգաս ինձ հետ, այլևս վոչ վոքից վախենալու առիթ չես ունենա... միայն թե ինձ հավատարիմ յեղիր... ել չխաբես... զեռքերդ Փանոսի խանութումն ե, դու այժմ ասացիր, թե Նավթուխ ես տարել... Յես տեր Ղազարն եմ, ամեն բան լավ գիտեմ... Հը՛. մեկ ել վոր կնոջդ ուզում ես սպանել ու պատեպատ ես ընկել, կասես Տ. Ղազարը մեռած լինի... Ասա, ասա... թե վոր մի տաս-քուսն թշնամի ունես, ասա, յես հախներիցը գամ, դրա դեղը իմ ձեռքին ե, այնպես, տանեմ բերդը գցեմ, վոր... Տհրբ.—ձեռքդ ասում եմ... Մի անգամ վոր կյանքս փրկել ես, արի մինչև վերջն ել ինձ կողմնակից յեղիր...

Բարբ.—Ախր յես...

Տ. Ղազ. — Ել վնչ մի խոսք. կամ ձեռքդ տուր, կամ գնում եմ... Այս խաղին վերջ պիտի տալ... յես քեզ ազատեցի խուզարկուհեքից, դու ել իմ կյանքն ես փրկել, վերջացավ... Մնաս բարով:

Բարբ. — Սպասիր:

Տ. Ղազ. — Ասա, հա՛, թե՛ չե՛:

Բարբ. — Հապա սրանց բանը ի՞նչ պետք է անենք:

Տ. Ղազ. — Դու «սա» ասա, զրանք բոլորն ել ձեռքիս մեջն են... (տեսնելով Սարգսին՝ ցնցվում է) ճի՛ էս, ի՞նչ մարդ ես...

Սարգիս. — Մարո տատիկը տունը չե՛:

Բարբ. — Ի՞նչ ես ուզում:

Սարգիս. — Աղբ թափելու փարան կուզեմ առնել:

Բարբ. — (Փող տալով) Ա՛ռ, գնա՛ բանիդ:

Տ. Ղազ. — (Սարձանակը ձեռքին հարձակվում է Սարգսի վրա) Ասա, ի՞նչ մարդ ես. տեսնում եմ, յերեսդ ներկած է ու մի-բուրդ կեղծ:

Սարգիս. — (Ապտակում է նրան և վայր գցում) Յերկյուղդ հիմք ունի, տեր հայր, յես քո հոգեհանն եմ:

Բարբ. — Ի՞նչպես թե (վախեցած) ոգնեցեք... ոգնեցեք...

Յերկ. զինվ. — Ձայնդ, ավազակների թագավոր... Մանրավաճառ հեղափոխական, պոռնիկների պոռնիկ: (վայր է գցում և խեղդում):

Սարգիս. — Արյունդ, արյունդ պետք է խմեմ, անպզամ մատնիչ, խաչակիր պոռնիկ:

Յերկ. զինվ. — Հանգստացա՛մ:

Սարգիս. — Հավիտյան:

Յերկ. զինվոր. — Հարկավոր է շտապով հեռացնել զիակաները:

Սարգիս. — Բնչիր. գցենք աղբանոցը:

Յերկ. զինվոր. — Աղբ եյիր, աղբ դարձիր:

Սարգիս. — Այս սրիկային ել...

Յերկ. զինվոր. — Յեղավ...

Սարգիս. — Այժմ հարկավոր է շտապել անվրդով և հանգիստ:

Յերկ. զինվոր. — Դու կերթաս աջ, իսկ յես՝ ձախ:

Սարգիս. — Կես ժամից հետո կապտահենք Պետրոսի մոտ, իսկ մի քանի որից հետո, մեր ձամբան դեպի Ռուսաստանն է:

Յերկ. զինվոր. — Դեպի Ռուսաստան՝ դասակարգային կռիվն ուսումնասիրելու:

Սարբեն. — Շտապեցեք: Շուտով մարդիկ կարող են գալ այստեղ:

Սարգիս. — Դու անցիր առաջ...

Սարբեն. — Դուք գնացեք, յես ել ահա գալիս եմ:

Յերկ. զինվոր. — Այժմ միայն հավաստիանում եմ, վոր հայ կինը մեծ ապագա ունի:

Սարգիս. — Չուշանաս... հանգիստ, առանց շփոթվելու (գնում են, յերկար լուռ թյուն. մտնում է Թափանյանը շփոթված և այլ-այլված):

Թափան. — Գասպար... Գասպար... (ծեծում է սանդուղքը) Գասպար... Մարո տատիկ, (բարձրանում է վերև ու վերադառնում է տարակուսած) Մարո տատիկ, տիկին Սաթենիկ... (Սաթենիկը դուրս է գալիս):

Սարբեն. — (Դռներում) Ի՞նչ է պատահել:

Թափան. — Գասպարը կամ Մարո տատիկը ձեզ մոտ ե՞ն:

Սարբեն. — Վնչ:

Թափան. — Ձեք տեսել, ո՛ւր գնացին:

Սարբեն. — Վնչ:

Թափան. — Սարսափելի դժբախտություն է պատահել:

Սարբեն. — Ի՞նչ կա...

Թափան. — Կնոջն սպանել են:

Սարբեն. — Ո՞ւմ կնոջը. Գասպարի:

Թափան. — Այո... և...

Սարբեն. — Խեղճ կատյուղա.

Թափան. — Ցավն ախ ե, վոր սպանողը բռնվել է և...

Սարբեն. — Յե՛վ...

Թափան. — Հանցանքը գցել է Գասպարի վրա... ուզում եմ նախադուշացնել, Խաթակն ասում է՝ կարող են ձերբակալել:

Սարբեն. — Յես չեմ կասկածում, վոր կատյուղան իսկապես վոր անմեղ զոհ դարձավ:

Թափան. — Ինչպե՞ս թե...

Սարբեն. — Իհարկե, այդ սպանության հանցանքը ձեզ յերկուսիդ վրա պետք է ընկնի...

Թափան. — Ինձ, վրա ել...

Սարբեն. — Իհարկե. ով եր ստիպում զինվորներին զիրքեր ուսումնասիրելու և հարձակվելու անգին ու անպաշտպան կնոջ վրա:

Թափան. — Ի՞նչ. այդ ի՞նչ ստեր են... բոլորը սուտ է:

Սարբեն. — Յերկյոտ նապաստակներ, վոր ուրիշների ձեռքերով եք մարդու սպանում...

Թափան.— Դուք մե կարծեք... դեռ դաշնակցութիւնը շատ ուժեղ է, և հարկավոր ժամանակ...

Սաքեն.— Վաճառականների դաշնակցութիւնը վիժում է որից որ, վորովհետեւ բանվոր-գյուղացիութիւնը արդեն դասակարգային հարցերով և սկսել հետաքրքրվել:

Մարո.— (Մտնում է) Ի՞նչ խաբար ա, ի՞նչ եք ձեններդ գրելներդ գցել, լսեցի՞ք, խալխն ի՞նչ ա իրար անցել...

Թափան.— Վերտեղ և Գասպարը:

Մարո.— Տանը չի

Թափան.— Չկա...

Մարո.— Յերևի շտապով գնացել ա. ախր ասում են, մթամ Կատուշին իրա սիրեկանը սպանել ա, ու հմի նրա քաղցած սոցիալիստ ախպերտինքը ամեն բան գցում են Գասպարի վրեն. ասում են՝ մթամ... (Սաթենիկը փակում է դուռը): Գնա՛, Սաթեն ջան, գնա՛, մի հենց ապրես, իմացիր, թե են վոր շուն-շան վորդին ա խեղճ երեխիս անումը կոտորում... իմ երեխես ախր ենքան խնդրեց, աղաչանք արեց, թե Կատուշա, մի՞ գնա, նամուզդ քեզ հավաքի, նստի երեխեքիդ մտիկ արա... նրա ճարը կտրած յեղբայրներին ինչքան լավութիւն ա արե...

Թափան.— Կորանք. վոտքով գլխով կորանք...

Մարո.— (Հարձակվելով) Դու ի՞նչ ես սուգ ու շիվանը տուն գցում... իսկի ել չենք կորչի... ի՞նչ ենք արել, վոր ի՞նչ կորչենք... հալբաթ Գասպարը գնացել ա Խաթակի մոտ... Քեզ լավ պահի, մեղքը վրեղ չառնես, թե չէ՝ տուններս կքանդես... (մտնում է պրիստավը, Գասպերչուկը և ամբոխ: Պրիստավը կարդում է):

Պրիս.— Գասպար Բարբառյան, սուրբ Մարտիանց փողոց, № 14:

Մարո.— Ե՛ստեղա, եստեղ, համեցեք, բաս մեզ մոռացել ես...

Պրիս.— Գասպար Բարբառյանը տանն է:

Մարո.— Տանն եր, բայց գնացել ա:

Պրիս.— Ո՞ւր է գնացել, կարո՞ղ եք ասել:

Մարո.— Չեմ գիտա, ջանիդ մեռնեմ, յես գնացել եյի ժամ, մե երկու ջուխտ մոմ վառելու. ամեն շաբաթ յես մի քանի անգամ ժամ հմ գնում, բնա. ախար առանց աստծու վոչինչ չի կատարվում աշխարհի երեսին:

Պրիս.— Չե՞ք կարող ասել, թե ո՞ւր է գնացել Գասպար Բարբառյանը:

Մարո.— Արա յես ի՞նչ գիտամ, իմ տղեն շատ մենձ-մենձ գործերի մեջ ա, իմ տղեն վախտ վախտ գնում ա տեղեֆոնով խոսում ա սրա նրա հետ... յես ինքս նոր եկա, ջեր վերե ել չեմ գնացել:

Պրիս.— Դուք ե վերեն ե:

Մարո.— Չէ, վոր տանն եր եղել դուրս կգար... Այ գնամ մի տեսնեմ, վո չսովեմ, սուտը սատանինն ա:

Պրիս.— Գասպերչուկ, գնա մի վերե, ի՞նքդ ստուգիր:

Գասպ.— Պա — պրիստավ, այ տեսեք, չախտեղ կարծեմ նրա վերարկուն է և գլխարկը:

Պրիս.— Այո՛, այո՛, տո՛ւր այստեղ:

Գասպ.— Համեցեք:

Պրիս.— Ո՞ւմն է այս վերարկուն:

Մարո.— Գասպարինն ա, Գասպարինը:

Պրիս.— Դուք հաստատ գիտե՞ք:

Մարո.— Ի, ըրմանաս դու, հալբաթ գիտամ:

Պրիս.— Տեսնենք, ի՞նչ կա գրպանում, (Փռում է վերարկուն աղբի արկղի վրա. հանում է թաշկինակ, ծխատուփ, լրագիր) ինչքան ինձ հայտնի յե, Գասպար Բարբառյանը չեր ծխում:

Մարո.— Հա՛, դո՛րթ ա, բայց միշտ մոտը պահում եր խալխին թավաղա անելու համար. համ ել եղ երծաթի կոլովը շատ եր հավանում:

Պրիս.— Այդպէս, այդպէս:

Գասպ.— Վերեղ վոչ վոք չկա:

Պրիս.— Փնտռիր ներքեղ:

Մարո.— Բաս չի կարելի իմանալ, թե ի՞նչ ես անում Գասպարին:

Պրիս.— Պետք է անհապաղ ներկայացնեմ պրոկուրորին, իսկույն կարգադրութիւն ստացա:

Մարո.— Հալբաթ մեծարք ունի պրոկուրորը:

Պրիս.— Կարելի յե, բայց թե ինչ տեսակի մեծարք է, չգիտեմ:

Ա. յեկվ.— Ախր չիմացար, Կատուշին սպանել են, ասում են դրա մատը մեջը խառնա. ինչ վոր թաքուն բան կա, ասում են:

Յերիք. յեկվ.— Ո՞վա իմանում, գլուխն առավ մի կուռը գնաց, ասում են՝ մատը մեջը խառնա...

Մարո.— Դուրսը քարոջնա տալիս դրա ասողը, երեսն ել պատմվը. իմ տղեն եղ թավուր բաներում չկա...

Պրիս. — (Խփելով արկղին) Իսկ յես հավատացնում եմ, վոր
կա... յես շարունակ կասկածում եյի, վոր այստեղ մի գաղտ-
նիք կա:

Մարն. — Ի՞նչ գաղտնիք, ի՞նչ եք ասում:

Պրիս. — (Խփելով արկղին) Այստեղ կա գաղտնիք:

Մարն. — Ի՞նչ եք սարսաղներին անգամ դնում, վո՞չ մի գաղտ-
նիք ել չկա:

Պրիս. — Յես հավատացած եմ, վոր այստեղ գաղտնիք կա:

Մարն. — Ասա, ելի, տեսնենք թե ի՞նչ գաղտնիք կա:

Պրիս. — Ո՞ւն ե այս գլխարկն ու վերարկուն:

Մարն. — Իմ վորդունը:

Պրիս. — Այս լրագիրը՞:

Մարն. — Իմ վորդունը:

Պրիս. — Այս թաշկինակը՞:

Մարն. — Իմ վորդունը:

Պրիս. — Այս ծխախոտատուփը՞:

Մարն. — Ծխախոտատուփն ել, ծխախոտատուփն ել:

Պրիս. — Արծաթե տուփը նո՞ւյնպես:

Մարն. — Այո, նույնպես:

Պրիս. — Ո՞ւր ե գնացել ձեր վորդին:

Մարն. — Ասացի, վոր չեմ իմանում:

Պրիս. — Ինչո՞ւ չեք իմանում:

Մարն. — Վորովհետեւ յես իմաստուն չեմ:

Պրիս. — Իսկ յես իմաստուն եմ և հավատացած, վոր այստեղ

մի ինչ վոր գաղտնիք կա. 30 տարի յես, ինչ յես վոստիկան եմ,
իմ հոտառությունը զարգացած ե այն աստիճան, վոր վոչ մի
շուն չի կարող մրցել ինձ հետ:

Գասպեր. — Պարոն պրիստավ, վոչ մի տեղ չգտնվեց հանցա-
վորը:

Պրիս. — Իսկ քեզ ո՞վ ասաց, թե Գասպար Բարբառյանը հան-
ցագործ ե:

Գասպեր. — Ինձ այնպես եր թվում:

Պրիս. Ինչո՞ւ յեր թվում:

Գասպեր. — Վորովհետեւ...

Պրիս. — Վորովհետեւ այստեղ մի գաղտնիք կա:

Գասպեր. — Ճշնարիտ ե, պարոն պրիստավ, գաղտնիք կա:

Պրիս. — Իսկ թե ինչ գաղտնիք կա... Սատանան գիտե... Ժա-
մանակները վատացել են... յերկու ամսից հետո վերջացնում եմ
փայլուն կարյերա... Թողակ կնշանակեն և կապուտ... ով ինձանից
շատ ծառայի, թող նա ել պարծենա... իսկ մինչև այդ կնստեմ
այստեղ (նստում ե աղբի արկղի վրա) և կսպասեմ Գասպար Բար-
բառյանի վերադառնալուն:



ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱՅԻ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ)

ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՈԿՏԵՄԲԵՐ Գրական - գեղարվեստական ժողովածու
№ 1. գինը 1 ուրլի
2. Te-Fe «Պատկերներ» կամեղյա 3 զործողությամբ,
(ՏԼԻՐ-ԳԼԻՍՏՈՐԱՆ) գինը 70 կոպեկ:
3. ԱՐՏ. ԳՈՇՈՅԱՆ «Սուրբիկի ճանապարհորդությունը» (ման-
կական սերիա), գինը 15 կոպեկ:
4. ՀՈԿՏԵՄԲԵՐ Գրական - գեղարվեստական ժողովածու
№ 2, հջ 176. գինը 1 ուրլի

ԴԻՄԵԼ ԲՈԼՈՐ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Վ. Պ. Գ. Աստղիացիայի Հայկ. Սեկցիային անմիջապես ղեկավար-
ներին և մեծաքանակ գնողներին գեղջ մինչև 30° 0':
Դիմել՝ — Թիֆլիս — Հայաբուռն — Պրոլետարացիության:

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ

Վրաստանի Հայ Գրողների Միության

„ԼՈՒՍԱՐԱՑ“

ժողովածուի № 1. — գինը — 1 ու. 50 կոպ.

հջ 160 — մեծադիր:

Մամուլի քաղ Ե «ԼՈՒՍԱՐԱՑ»-ի № 2

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

<< Ազգային գրադարան



NL0367115

58442